



Empowered lives.
Resilient nations.

ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրային փաստաթուղթ

Տեղական զարգացման բարելավված պլանավորման միջոցով կլիմայի փոփոխության ռիսկերի մեղմումը գյուղական համայնքներում

Երկիրը՝ Հայաստան

ՄԱԿԶԱԾ ձեռքբերում 4: Բնապահպանական և աղետների ռիսկերի կառավարումն ինտեգրված է ազգային և տեղական զարգացման ծրագրերում:

Գործակալության ձեռքբերում 4.1: Հայաստանն ավելի լավ է դիմակայում բնապահպանական մարտահրավերներին, ներառյալ կլիմայի փոփոխության և բնական ռեսուրսների կառավարումը:

Գործակալության ձեռքբերում 4.1.4: Կլիմայի փոփոխության մեղմմանը և հարմարվողականությանն արձագանքող նորարարական քաղաքականություններ և փորձառություն մշակելու աղետների ռիսկերի կառավարման ազգային կարողությունները հզորացված են:

4.2.1: Աղետների ռիսկերի նվազեցման կարողությունները հզորացված են տեղական մակարդակներում՝ ազգային և տեխնոլոգիական վնասներին և հանրային առողջության վտանգներին նախապատրաստելու, մեղմելու և արձագանքելու նպատակով:

Իրագործող մարմինը՝

Իրականացնող գործընկերները՝

ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն,
ՀՀ տարածքային կառավարման նախարարություն,
ՀՀ բնապահպանության նախարարություն,
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ԱՌՆ ազգային պլատֆորմ, համայնքային կազմակերպություններ և ՀԿ-ներ:

Համառոտ նկարագրություն

Կլիմայի հետևանքով 21-րդ դարում աղետների մասշտաբների աճի կանխատեսումը ստիպում է հատուկ ուշադրություն դարձնել աղետների և կլիմայական ռիսկերի մեղմմանը, քանի որ դրանք սերտորեն կապված են համայնքների և ամբողջ երկրի այն համապատասխան ունակությանը՝ որով երաշխավորվելու է տնտեսական աճը և երկրի զարգացման և բարգավաճման ներուժը: Աղետների և կլիմայական ռիսկերի նվազեցումը պետք է շարունակաբար մնա ազգային և տարածաշրջանային զարգացման ռազմավարությունների գերակայության տիրույթում:

Հայաստանը կլիմայի փոփոխության ազդեցության նկատմամբ ռիսկային երկրներից մեկն է և լրջորեն տուժում է այնպիսի տարերային աղետներից, ինչպիսիք են՝ երկրաշարժերը, սողանքները, սելավները, ջրհեղեղները, կարկուտը, երաշտը և հողի էրոզիան: Տարբեր գիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կլիմայի փոփոխությունն ազդում է բնական վտանգների հաճախականության և ծանրության վրա, որոնք, իրենց հերթին, տանում են դեպի սոցիալական խոցելիության ավելացմանը և վնասների աճին: Ահա թե ինչու է հրատապ դառնում կայուն զարգացման խթանումը՝ կլիմայական ռիսկին առնչվող խոցելիության նվազեցման միջոցով: Կլիմայի փոփոխության ռիսկերի առկայության ընդունումը և համայնքների ու տնտեսության ոլորտների, մասնավորապես՝ գյուղատնտեսության վրա բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար մշակված ռազմավարությունները մեծ նշանակություն ունեն Հայաստանի համար:

Երկրներին՝ ռիսկերի կառավարման կարողությունների զարգացման, շահառուներին՝ կլիմայի աճող ռիսկերից բխող մարտահրավերներին դիմակայելու համապատասխան որոշումներին օժանդակող տեղեկատվության և գործիքների տրամադրման նպատակով՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ) մշակել և ընդունել է կլիմայական ռիսկի կառավարման մի ծրագիր (ԿՌԿ), որն ինտեգրում է աղետների ռիսկերի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ավանդական մոտեցումները և ընդգրկում է հնարավոր գործողությունների մի լայն շրջանակ, ինչպիսիք են՝ ռազմավարական դիվերսիֆիկացիան, ֆինանսական գործիքները, վաղ արձագանքման համակարգերը, կարողությունների հզորացումը և այլն: Այն նաև նպատակ ունի առավելագույնի հասցնելու կլիմայի նկատմամբ զգայուն տնտեսության ոլորտների հնարավորությունները: Ավելին, ԿՌԿ ծրագրի խթանման նպատակով ՄԱԶԾ ֆինանսավորել է Կլիմայական ռիսկի կառավարման - Տեխնիկական օգնության աջակցման մի ծրագիր (ԿՌԿ-SOUՕ), որի նպատակն է բարելավել կլիմայի փոփոխականությանը և կլիմայի փոփոխությանն առնչվող ռիսկերի կառավարման կարողությունները:

Առաջարկվող ծրագրի նպատակն է լրացնել կարևորագույն գիտելիքների պակասը և այն միտված է գնահատել աղետների և կլիմայական ռիսկերը: Ծրագրի գործունեությունը կենտրոնանալու է ԿՌԿ - SOUՕ Հայաստանի ծրագրի արդյունքների և ձեռքբերումների վրա, որը նախաձեռնվել էր 2008թ. հոկտեմբերին՝ Թայլանդի Բանգկոկ քաղաքում կայացած մեկնարկային ժողովի ժամանակ: Ընթացիկ ծրագրի տևողությունը կլինի 2 տարի (24 ամիս), որի նպատակն է մեղմել գյուղական համայնքներում կլիմայի փոփոխության ռիսկերը, կլիմայական ռիսկի կառավարումն ընդգրկել գյուղատնտեսության ոլորտի ծրագրերում և հզորացնել խոցելի համայնքների հարմարվողունակության կարողությունները՝ կլիմայի նկատմամբ դիմակայությունը խրախուսելու նպատակով: Ծրագիրն աջակցելու է կլիմայական ռիսկի կառավարումը ԱՌՆ ազգային ռազմավարության մեջ ինտեգրելուն, որի նպատակն է՝ հզորացնել ազգային և համայնքային մակարդակներում կլիմայական ռիսկի կառավարման ապացուցողական հիմքերը, և դիմակայության բարձրացման նպատակով օժանդակելու է համայնքային զարգացման ծրագրերին, ինչպես նաև վաղ ահազանգման համակարգերի հզորացմանը:

Ծրագրի տևողությունը՝ 2013-2015 (24 ամիս)
 Ռազմավարական պլանը՝ Կլիմայի
 փոփոխության ռիսկերի
 մեղմումը գյուղական
 համայնքներում

Ծրագրի ՆՀ՝ 00075559
 Արդյունքի ՆՀ՝ 00087401
 Մկիզբը՝ 1 հոկտեմբերի, 2013թ.
 Ավարտը՝ 30 սեպտեմբերի, 2015թ.
 ԾԳԿ նիստի օրը՝ 23 սեպտեմբերի 2013թ.
 Կառավարման ձևաչափ՝ ՈւԻ

Անհրաժեշտ միջոցները, ընդամենը՝
 500.000 ԱՄՆ դոլար
 Հատկացված միջոցները, ընդամենը՝
 500.000 ԱՄՆ դոլար

- Կանոնավոր
- Այլ
 - ՃԿՎԲ՝ 500.000 ԱՄՆ դոլար

Բնեղեն ներդրում՝
 ՀՀ կառավարություն՝ 60.000 ԱՄՆ դոլար
 ՄԱԶԾ ՀԳ՝ 50.000 ԱՄՆ դոլար

Համաձայնեցված է (ՄԱԶԾ)՝

| | | |
|---|---|----------|
| I. ԼՆԱԽԱՊԱՏՍՈՒԹՅՈՒՆԸ..... | 7 | |
| II. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ | 9 | |
| 1. Կլիման և կլիմայի փոփոխությունը Հայաստանում | 9 | |
| 2. Բնածին վտանգների ռիսկերը Հայաստանում..... | 11 | |
| 3. Կլիմայի և աղետների նկատմամբ խոցելիությունը..... | 12 | |
| 4. Աղետների ռիսկերի նվազեցումը և կլիմայական ռիսկերի կառավարումը. Ինստիտուցիոնալ կառուցվածքը և կարողությունները..... | 13 | |
| 5. Կլիմայի փոփոխության ռիսկերի մեղմման անհրաժեշտությունը | 14 | |
| III. ՄԱԶԾ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԵԼԱԿԵՏԱՑԻՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ..... | 15 | |
| IV. ԾՐԱԳՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ | 17 | |
| V. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ, ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ,ԱՐԴՅՈՒՆՔԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ..... | 20 | |
| VI. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ և ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ..... | 30 | |
| VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ..... | 36 | Deleted: |
| VIII. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՁԵՎԱԶԱՓԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ..... | 40 | Deleted: |
| IX. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ..... | 47 | Deleted: |
| X. ԱՌԻԴԻՏԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ..... | 48 | Deleted: |
| XI. ԲՅՈՒՋԵ..... | ERROR! BOOKMARK NOT DEFINED | Deleted: |
| XII. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ | 49 | Deleted: |
| Հավելված 1. Ծրագրի խորհրդի և ազգային տնօրենի ակնկալվող պարտականությունները..... | 49 | Deleted: |
| Ընդհանուր պայմաններ..... | 49 | Deleted: |
| Հավելված 2. Ռիսկերը և մեղմման միջոցառումները..... | 51 | Deleted: |

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | |
|----------|--|
| ՀՓԾ | Հայաստանի փրկարար ծառայության |
| ԾՏՀ | Ծրագրի տարեկան հաշվետվություն |
| ՏԱՊ | Տարեկան աշխատանքային պլանի |
| ՃԿՎԲ | Ճգնաժամի կանխարգելման և վերականգնման բյուրո |
| ՍԳԱՍ | Սովորական գործելակերպ – առանց միջոցառումների |
| ԿՓ | Կլիմայի փոփոխություն |
| ՓԲԸ | Փակ բաժնետիրական ընկերություն |
| ՀԳ | Հայաստանյան գրասենյակ |
| ՏՈՀ | Տարածաշրջանի ոլորտային համայնք |
| ՀԾԳՊ | Համագործակցության ծրագրի գործողությունների պլան |
| ԿՌԿ–ՏՕԱԾ | Կլիմայական ռիսկերի կառավարման տեխնիկական օգնության աջակցման ծրագիր |
| ԿՌԿ | Կլիմայական ռիսկերի կառավարում |
| ԱՌՆ | Աղետների ռիսկերի նվազեցում |
| ԵՀ | Եվրահանձնաժողով |
| ԲԾ | Բնապահպանական ծրագրեր |
| ՊԳԿ | Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն |
| ՀՆԱ | Համախառն ներքին արդյունք |
| ՀՀԿ | ՀՀ կառավարություն |
| ՀԳԾ | Հյոգոյի գործողությունների ծրագիր |
| ԿՓՓՄԽ | Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խումբ |
| ՀԶՆ | Հազարամյակի զարգացման նպատակներ |
| ՄնԳ | Մոնիթորինգ և գնահատում |
| ԲՆ | ՀՀ բնապահպանության նախարարություն |
| ԱԻՆ | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն |
| ՏԿՆ | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն |
| ԳՆ | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն |
| ՀԱԾ | Հարմարվողականության ազգային ծրագիր |
| ԱՀ | Ազգային հաղորդագրություն (Կլիմայի փոփոխության ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի ներքո) |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| ՈւԻԶ | Ուղղակի իրականացման ձևաչափ |
| ԾԱՏ | Ծրագրի ազգային տնօրեն |
| ԱՎԾ | Ազգային վիճակագրական ծառայություն |
| ԾԱԳԽ | Ծրագրի արդյունքների գնահատման խորհուրդ |
| ԾԱՂ | Ծրագրի առաջադրանքի ղեկավար |
| ԵՀ | Եռամսյակային հաշվետվություն |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀԱՍՀ | Հիմնական աջակցության ստանդարտ համաձայնագիր |
| ՊՈԱԿ | Պետական ոչ առևտրային կազմակերպություն |
| ՏԱ | Տեխնիկական առաջադրանք |
| ՄԱԿ | Միավորված ազգերի կազմակերպություն |
| ՄԱԿ ԶԱԾ | ՄԱԿ-ի Զարգացման աջակցության ծրագիր |
| ՄԱԿ ԲԾ | ՄԱԿ –ի Բնապահպանական ծրագիր |
| ՄԱԶԾ | ՄԱԿ –ի Զարգացման ծրագիր |
| ՄԱԿ ԿՓՇԿ | ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիա |
| ԱՄՆ ՍԶԳ | ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն |

| | |
|-----|---|
| ԽնՀ | Խոցելիություն և հարմարվողականություն |
| ՀԲ | Համաշխարհային բանկ |
| ՊՀԾ | Պարենի համաշխարհային ծրագիր |
| ՕՀԿ | Օդերևութաբանության համաշխարհային կազմակերպություն |

I. ՆԱԽԱՊԱՏՍՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհի գիտական հանրությունը ընդունում է, որ կլիմայի փոփոխությունն արդեն իրականություն է: Վերջին դարի ընթացքում երկրի մակերեսի ջերմաստիճանը բարձրացել է, և ֆիզիկական և կենսաբանական համակարգերի վրա դրա հարակից ազդեցությունը ավելի նկատելի է դառնում: Ջերմաստիճանի աճի և տեղումների ձևերի փոփոխությունների արդյունքում, կլիմայի փոփոխությունը կհանգեցնի այնպիսի տեղաշարժերի, ինչպիսիք են՝ ծովի մակարդակի բարձրացումը և կլիմայական գոտիների տեղաշարժը, ինչպես նաև կմեծանա ծայրահեղ եղանակային այնպիսի երևույթների հաճախականությունն ու ուժգնությունը, ինչպիսիք են՝ երաշտները, ջրհեղեղները և փոթորիկները: Ծայրահեղ կլիմայական երևույթների հաճախականության և ծավալների հետևանքով հասցված վնասների շարունակական աճի պատճառով, հասարակությունները և բնական համակարգերն ընկնում են մեծ ճնշումների տակ և, դրա արդյունքում, մեծանում է ռիսկերի իմաստալից կառավարման և մեղմման տարբերակների ուսումնասիրության անհրաժեշտությունը: Կլիմայի փոփոխության ուժգնության, արագության և տարածաշրջանային ձևի վերաբերյալ ճշգրիտ կանխատեսումների ներկայիս անորոշության պայմաններում, դրա հետևանքներն ակնհայտորեն ազդելու են և ինչ - որ կերպ փոխելու են ապագա սերունդների կյանքը: Կլիմայի փոփոխության հետևանքով հասցված կորուստների և վնասների ազդեցությունը, ամենայն հավանականությամբ, հանգեցնելու է ավելի բարձր աղքատության մակարդակի այն երկրներում, որոնք առավել խոցելի են կլիմայի փոփոխության նկատմամբ: Ցածր եկամուտ ունեցող համայնքների խոցելիության հիմնական պատճառն աղքատությունն է, որտեղ՝ բնակիչների սակավ միջոցները հնարավորություն չեն տալիս դիմակայելու եղանակային ցնցումներին:

Չնայած կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա կլիման ազդում է, սակայն, հատկապես կարևոր են դրա հետևանքները գյուղատնտեսական ոլորտի վրա: Գյուղական բնակչության եկամուտները և ապրուստը հիմնականում գոյանում է գյուղատնտեսական գործունեությունից, որը, հատկապես, ենթակա է կլիմայի փոփոխականության ազդեցությանը: Գյուղատնտեսությունը մեծապես կախված է հատուկ բնակլիմայական պայմաններից և դժվար է գնահատել այդ ոլորտի վրա կլիմայի փոփոխության ազդեցության ողջ ծավալները: Երաշտների և ջրհեղեղների հաճախականության և խստության փոփոխությունները կարող են լուրջ խնդիրներ դնել ֆերմերների առաջ: Երաշտը կարող է սպառնալ նաև անասնապահությանը՝ արոտավայրերին ու կերի պաշարներին և նվազեցնել արածող անասունների համար մատչելի, որակյալ անասնակերերի քանակը: Ամառային ավելի բարձր ջերմաստիճանի և սակավ տեղումների պատճառով, որոշ տարածքներ կարող են տառապել ավելի երկարատև և առավել խիստ երաշտներից: Հացահատիկային կուլտուրաներով սնվող անասունների համար՝ երաշտի պատճառով բուսաբուծության փոփոխությունը նույնպես կարող է մեծ խնդիրներ առաջացնել: Կլիմայի փոփոխությունը կարող է բարձրացնել այն մակարդակների և հիվանդությունների տարածվածությունը, որոնք ազդում են անասունների վրա: Վաղահաս գարունը և ավելի տաք ձմեռը կարող են նպաստել որոշ մակարդակների և հիվանդության հարուցիչների ավելի հեշտ գոյատևմանը: Անձրևային տեղումների ավելացման պատճառով որոշ վայրերում նպաստավոր պայմաններ կստեղծվեն խոնավասեր հարուցիչների լայն տարածման համար: Ընդհանուր առմամբ կլիմայի փոփոխությունը կարող է ավելի դժվարացնել բուսաբուծության և անասնապահության ավանդական ձևերն այն նույն վայրերում, որտեղ դրանք կատարվել է անցյալում: Կլիմայի փոփոխության հետևանքները պետք է դիտարկվեն նաև այլ զարգացող գործունեությունների գույքահեռ, որոնք ազդում են գյուղատնտեսական արտադրանքի վրա, այդ թվում՝ գյուղատնտեսության վարման մեթոդների և տեխնոլոգիաների

փոփոխությունները: Պետք է նաև հաշվի առնել այն, որ ջերմաստիճանի և ածխածնի պարունակության բարձրացումը որոշ վայրերում կարող է նպաստավոր լինել որոշ մշակաբույսերի համար, սակայն այդ առավելությունն իրականացնելու համար անհրաժեշտ կլինի բավարար մակարդակի հասցնել պարարտացումը, հողի խոնավությունը, ջրի առկայությունը և մի շարք այլ պայմաններ:

Տեղական ապրուստի միջոցների վրա կլիմայի փոփոխության ադդեցությունը և դրա նկատմամբ վերջինիս խոցելիության հանգամանքի պատկերացումը տանում է դեպի կլիմայական ռիսկերի կառավարման տարբեր մեթոդների ինտեգրմանը: Տեղական գործոնների, օրինակ՝ միկրոկլիմայական տատանումների, գյուղատնտեսության համակարգերի և սոցիալտնտեսական տարբերությունների վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք ազդում են խոցելիության և կարողությունների մակարդակի վրա, պետք է համատեղել կլիմայի ազդեցության մոդելներից ստացված արդյունքների հետ՝ այդ տվյալները զարգացման պլանավորման մեջ և քաղաքականության գործընթացներում օգտագործելու նպատակով: Ընդհանուր առմամբ, կլիմայական վտանգների նկատմամբ խոցելիության գնահատման հնարավորության համար պետք է կապակցել կենսաֆիզիկական, սոցիալական և տնտեսական տվյալները, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման նախարարության (ՏԿՆ), ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ), ՀՀ գյուղատնտեսություն նախարարության (ԳՆ), ինչպես նաև կից մասնագիտացված հաստատությունների շրջանակներում հզոր ինստիտուցիոնալ կարողություններ ունենալ, որոնք անհրաժեշտ կլինեն կլիմայի փոփոխության ռիսկերի, ազդեցության գնահատման, կլիմայական ռիսկերի քարտեզագրման և ակտիվ ու նախահարձակ մեղմման միջոցառումների պլանավորման նկատմամբ ուժեղ մոնիտորինգի համակարգերի իրականացման և տեղեկատվության մշակման և թարմացման համար:

Ելնելով կլիմայի ազդեցության անորոշ բնույթից, դա պետք է մի դինամիկ գործընթաց լինի, որն ընդգրկում է տեղական և գիտական գիտելիքների ինտեգրումը և խրախուսում է ազդակիր համայնքների, ֆերմերների, ինչպես նաև քաղաքական որոշում կայացնողների կողմից այդ տեղեկատվության դաշտային փորձարկումները: Կլիմայի փոփոխության նկատմամբ համայնքների ուժը և գյուղական ենթակառուցվածքների և ֆերմերային համակարգերի տոկունությունը աճում է այն դեպքում, երբ տեղեկատվությունն արդյունավետ կերպով է մատուցվում համայնքներին՝ դրանով իսկ բարձրացնելով այդ գործընթացների նկատմամբ վերջիններիս սեփականատիրության զգացման ընկալումը: Այսպիսով, ապրուստի միջոցների դիմակայության բարձրացման նպատակով տեղական կարողությունների զարգացումը մի անհրաժեշտ ներդրում է, որի միջոցով հնարավոր է դառնում դիմակայել կրկնվող աղետներին և երկարացնել դրական արդյունքները: Մյուս կողմից էլ, գյուղատնտեսական լավագույն փորձի իրականացումը և տեղական պայմաններին հաջողված լուծումների հարմարեցումն ապրուստի միջոցների անվտանգության ապահովման առանցքային սկզբունքն է: Հետևաբար, լավագույն փորձի բացահայտման, առաջնահերթության որոշման և ընտրության տեղական գործընթացում հատկապես կարևոր են դառնում շահակիցների ներգրավվածության արդյունավետ մեխանիզմները: Ռիսկերի կառավարումը կլիմայական վտանգների հաջող գնահատման մյուս էական բաղադրիչն է: Կարելի է ասել, որ աղետավտանգ համայնքները հաճախ լավ հմտացած են կլիմայից առաջացած վտանգների արձագանքման գործում, սակայն ծայրահեղ կլիմայական երևույթների հաճախականության և չափերի սպասվելիք աճը կարող է գերազանցել նրանց դիմակայման կարողությունները: Մեղմման միջոցառումների արդյունավետ ընդունման համար համայնքներին անհրաժեշտ է այնպիսի տեղեկատվություն, որի միջոցով հնարավոր կլինի գնահատել ընթացիկ խոցելիությունը և ապագա կլիմայական ռիսկերը: Ռիսկերի կառավարման և վաղ ահազանգման

համակարգերն այն առանցքային միջոցներն են, որոնցով նվազեցվում են կլիմայի հետ կապված աղետների հետևանքները: Տեղաբնակների կողմից կիրառվող տեղական վաղ ահազանգման համակարգերը, գյուղատնտեսության վարման փորձը և դիմակայման մեխանիզմները այն կարևոր գործոններն են, որոնք պետք է վերլուծել:

Կլիմայի փոփոխությունը ապրուստի միջոցների և տնտեսության ու ենթակառուցվածքների նկատմամբ սպառնալիք է հանդիսանում: Դա մի բազմաբովանդակ խնդիր է, որը մեկուսացված լուծում չի կարող ունենալ: Ճիշտ ժամանակին բացահայտումն ու կլիմայական ռիսկի կառավարման միջոցառումների մշակումը հնարավորություն կտա մեղմելու կլիմայի փոփոխության բացասական հետևանքները, կնվազեցնի կլիմայական աղետներից առաջացող վնասները և կնպաստի աղքատության հաղթահարմանը: Կլիմայական ռիսկերի կառավարումը նշանակում է՝ զարգացնել և սովորել, թե ինչպես պետք է կիրառել միջոցառումների այն շարքը, որը նվազագույնի է հասցնում կլիմայի հետևանքով առաջացած բնական աղետների վնասները և մեծացնում է համայնքների դիմակայությունը կլիմայի ներկա և ապագա փոփոխականության նկատմամբ:

II. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


1. Կլիման և կլիմայի փոփոխությունը Հայաստանում

Այն փաստը, որ Հայաստանը գտնվում է Փոքր Կովկասի լեռնաշղթայի կենտրոնական մասի *մերձարևադարձային գոտում*՝ էապես ազդում է երկրի կլիմայի վրա, որը բնութագրվում է այդ լայնություններին հատուկ ակնհայտորեն չոր ու մայրցամաքային կլիմայով: Այն բնութագրվում է մեծաքանակ արևային էներգիայով և եղանակի խիստ փոփոխականությամբ: Երկրի կլիմայական առանձնահատկությունները որոշվում են նրա լեռնային տեղանքով: Հստակորեն սահմանված են նրա ուղղահայաց կլիմայական գոտիները:





Հայաստանի Հանրապետության քարտեզը

Տարվա ընթացքում տեղացող անձրևները շատ անհավասարաչափ են և առավելագույնը լինում են գարնանը ու վաղ ամռանը: Անձրևների տարեկան քանակը կազմում է 592 մմ այն դեպքում, երբ հարթավայրերում և ցածրադիր վայրերում այն կազմում է 200 - 250 մմ, իսկ լեռնային շրջաններում հասնում 1000-1100 մմ: Միջին տարեկան ջերմաստիճանը $5,5^{\circ}\text{C}$ է, $+43,8^{\circ}\text{C}$ –ը՝ բացարձակ առավելագույն ջերմաստիճանն է (արձանագրվել 2011 թ հուլիսին՝ Մեղրիում) և -42°C –ը՝ բացարձակ նվազագույն ջերմաստիճանն է (նկատվել է Աշոցքում՝ 1961 թ. հունվար ամսին): Հուլիսից մինչև օգոստոս ընկած ժամանակահատվածում միջին ջերմաստիճանը տատանվում է 10°C -ով՝ բարձրադիր շրջաններում և $+26^{\circ}\text{C}$ -ով՝ հարթավայրերում: Օդերևութաբանական դիտարկումներից ստացված հետազոտական տվյալները ցույց են տալիս, որ վերջին տասնամյակներում Հայաստանում ջերմաստիճանի աճ է նկատվում: Իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 1935-2012թթ. Հայաստանի տարածքում տարեկան տեղումների արձանագրված արժեքները նվազել են՝ 1961-1990թթ. ելակետային ժամանակաշրջանի համեմատ (Նկար 2): Այսպիսով, գնահատված փոփոխությունները ցույց են տալիս, որ վերջին 80 տարիների ընթացքում ջերմաստիճանը աճել է տարեկան $1,03^{\circ}\text{C}$ -ով և տեղումների քանակը նվազել է 10% - ով (Նկար 1):



Նկար 1. Օդի միջին ջերմաստիճանի (ա) և տեղումների միջին տարեկան շեղումները (բ)՝ 1961-1990 թթ միջինի նկատմամբ:



ա)

բ)

Նկար 2. Միջին ամառային (ա) և ձմեռային (բ) օդի ջերմաստիճանի շեղումը՝ 1961-1990թթ. միջինի նկատմամբ:

2. Բնածին վտանգների ռիսկերը Հայաստանում

Հայաստանի առաջ ծառայած հիմնական ռիսկերը երկրաշարժերն են, երաշտները, ջրհեղեղները, կարկուտը, սելավները, սողանքները, էրոզիան և անապատացումը: Դեռևս Համաշխարհային բանկի 2005թ. «Բնական աղետների թեժ կետեր-գլոբալ ռիսկերի վերլուծություն» զեկույցում Հայաստանը նշված էր բազմաթիվ վտանգներին ենթակա առաջին 60 երկրների ցանկում: Դեռ 2004թ. ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի բնական աղետների ռիսկերի նվազեցման զեկույցում բացահայտվել էր, որ 1980-2000թթ. աղետների հետևանքով Հայաստանում մեկ միլիոն բնակչին ընկած մահվան դեպքերի միջին քանակը կազմել էր 325 մարդ, ըստ որի հայաստանցիների ավելի քան 80% ենթարկվում է աղետալի իրադարձությունների փաստացի ռիսկերի: Չնայած Հայաստանի հիմնական սպառնալիքը գալիս է երկրաշարժից (երկրի տարածքի 100% երկրաշարժավտանգ գոտում է), երկրի ամբողջ տարածքի 98% ենթակա է երաշտի և 31%՝ հեղեղման ռիսկերի:¹

Երկրաշարժեր. Հայաստանը գտնվում աշխարհի առավել ակտիվ սեյսմիկ շրջաններից մեկում և երկրաշարժերի նկատմամբ ամենախոցելի երկիրն է, որտեղ հարաբերական խոցելիությունը հաշվարկվում է վտանգի ենթարկված մեկ միլիոն բնակչի հաշվով՝ սպանվածների քանակով:

Սողանքներ. Սողանքային վայրերը կազմում են Հայաստանի տարածքի ավելի քան 4% և բնակչության մոտ 35% բնակվում է սողանքավտանգ վայրերում: Ընդհանուր առմամբ սողանքների պատճառը հորդառատ տեղումներն են, սակայն, ըստ ՄԱԿ Բնապահպանական ծրագրի (ՄԱԿ ԲՊԾ) հաշվետվության, ոռոգման,

¹Արտակարգ դեպքերի տվյալների շտեմարան (EM-DAT), www.emdat.be.

ջրամատակարարման և կոյուղու համակարգերի վատ շահագործման և պահպանման հետևանքով առաջացող ջրային կուտակումները նպաստում են Հայաստանի մի շարք քաղաքներում սողանքների առաջացմանը:

Մեղավներ. Ինչպես մի քանի հետազոտություններ ցույց են տվել, Հայաստանի տարածքի կեսից ավելին, հատկապես միջին բարձրադիր լեռնային շրջանները, ենթակա է սելավների:

Ջրհեղեղներ. Հայաստանը առատ հոսող մակերեսային ջրեր չունի: Սակայն, տարեկան ամբողջ արտահոսքի մոտ 55-70% տեղի է ունենում գարնանը՝ ձյան հալոցքի պատճառով: Սա կարող է տաս անգամ մեծացնել մի քանի գետերի ավազաններում ջրի ծավալները և սեզոնային հեղեղումների պատճառ հանդիսանալ և մեծ վնասներ հասցնել գույքին և ենթակառուցվածքներին:

Կարկուտ. Կարկուտը գյուղատնտեսության ոլորտում ամենամեծ բնածին վտանգներից է և որի պատճառով ամեն տարի ֆերմերները տասնյակ միլիոնավոր դոլարների վնասներ են կրում:

Երաշտ. Ըստ Հիդրոմետ ծառայության տվյալների, վերջին երեսուն տարիների ընթացքում Հայաստանում բարձրացել է միջին ջերմաստիճանը, և տեղումներն ու խոնավությունը նվազել են: Երկրի տարածքի շուրջ 75% ենթակա է անապատացման և չորացման: Հաշվի առնելով այն, որ գյուղատնտեսական հողերի մեծ մասն արդեն վտանգված է մթնոլորտային և մակերեսային երաշտից և շարունակական խոցելիության առկայությունից (ոռոգման և դրենաժային ենթակառուցվածքների վատթարացում, մասնատված, փոքր հողակտորների մատակարարման ցածր արդյունավետություն և մշակաբույսերի բերքաշրջանառության և ագրոտեխնիկական միջոցառումների սահմանափակումներ), ապա կլիմայի փոփոխության հետևանքները կարող են մեծացնել երաշտի բացասական ազդեցությունը, հաճախականությունը և խստությունը:

Էրոզիա. Հայաստանի Փրկարար ծառայության տվյալների համաձայն, երկրի տարածքի կեսը տառապում է երոզիայից:

Անապատացում. Կլիմայի փոփոխության և մարդու գործունեության հետևանքով անապատացման ծավալները աճել են: Երկրում անտառների կառավարման թերությունների և անօրինական ծառահատումների պատճառով 1990-ականներին Հայաստանը կորցրեց իր անտառածածկ տարածքների 20%, իսկ 80% համարվում է վտանգված:

3. Կլիմայի և աղետների նկատմամբ խոցելիությունը

Հայտնի է, որ այնպիսի առանցքային սոցիալտնտեսական ոլորտները, ինչպիսիք են՝ գյուղատնտեսությունը, ջուրը, առողջապահությանը, բնական ռեսուրսները, բնապահպանությանը և այլն, կանգնած են մեծ խնդիրների առաջ: Դրանց պատճառը տարբեր կլիմայական երևույթներն են, որոնք լայնատարած բացասական հետևանքներ են ունենում և ազդում են երկրների կայուն զարգացման վրա: Հայաստանի փոփոխական կլիման արդեն իր դերն է խաղում երկրի զարգացման գործում և սոցիալտնտեսական հիմնախնդիրներ առաջացնում: Գյուղատնտեսության ոլորտը, լինելով Հայաստանի տնտեսության կարևոր ոլորտներից մեկը, առավել խիստ վտանգվածն ու խոցելին է: Պարենային պաշարների համար այդքան կարևոր ոլորտը տալիս է երկրի ՀՆԱ առնվազն 17%: Բացի այդ, բնակչության 52% աշխատում է գյուղատնտեսության ոլորտում: Կլիմայի փոփոխության ազդեցությունը գյուղատնտեսական արտադրանքի վրա բարձրացնում է այն գյուղական աղքատ բնակչության սոցիալական խոցելիությունը, որոնց ապրուստի միակ աղբյուրը բնատնտեսությունն է:

Հայաստանը, որի առանցքային զարգացման ոլորտներից մեկը, մասնավորապես, գյուղատնտեսությունն է, հակված է ենթարկվելու կլիմայի հետ կապված կրկնվող բազմաբնույթ բնական աղետների հարվածների և հաճախ տուժել է հիդրոոդերևութաբանական ծագում ունեցող կլիմայական փոփոխականությունից և բնական աղետներից, որոնք հանգեցնում են հսկայական սոցիալական և տնտեսական հետևանքների: Ջերմաստիճանի փոփոխությունները, եղանակային ծայրահեղ երևույթների հաճախականությունը և ուժգնությունը կարող են էապես ազդել մշակաբույսերի բերքատվության վրա, ինչպես նաև կարող են վնասել անասնապահությանը: Երաշտները, հեղեղումները, ձմեռային սառնամանիքները, կարկտահարումը և անապատացումը գյուղական տնտեսություններին ծանր բացասական հետևանքներ են թողնում. նվազեցնում են եկամուտները, ուժեղացնում են հողի էրոզիան՝ ամեն տարի ֆերմերներին պատճառելով հազարավոր դոլարների վնաս և, գյուղական վայրերում իջեցնում են պարենային անվտանգության մակարդակը: Պարենի համաշխարհային ծրագիրը (ՀՊԾ), որը պարենի արտակարգ օգնության գործում ՄԱԿ-ի առաջատար գործակալությունն է, երկրաշարժերը, անտառազրկումը, անապատացումը, էրոզիան, ձմեռային սառնամանիքները, ջրհեղեղներն ու երաշտները համարում է Հայաստանի պարենային անվտանգության գլխավոր սպառնալիքները:

4. Աղետների ռիսկերի նվազեցումը և կլիմայական ռիսկերի կառավարումը. Ինստիտուցիոնալ կառուցվածքը և կարողությունները

Սպիտակի 1988թ. ավերիչ երկրաշարժից հետո Հայաստանի կառավարությունը սկսել է մեծ ուշադրություն դարձնել ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակների կառավարման համակարգերի բարելավման վրա, որի նպատակով 1991թ. հետո նշանակալի օրենսդրական փաստաթղթեր են ընդունվել և ստեղծվել է ազգային Սեյսմիկ պաշտպանության և արտակարգ իրավիճակների կառավարման վարչությունը: Ներկայումս Հայաստանում աղետների ռիսկի կառավարման գործում ներգրավված են հետևյալ առանցքային մարմիններն ու հաստատությունները, որոնք պատասխանատու են հիմնական վտանգների, ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակների կառավարման համար:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն. Հիմնադրվել է 2008թ., որի երեք հիմնական գերակայություններն են՝ մշակել ռիսկի գնահատման և արտակարգ իրավիճակների պատրաստվածության ծրագիր, իրականացնել արտակարգ իրավիճակների արձագանքման և վերականգնողական աշխատանքների միջոցառումներ և համակարգել ռիսկի մեղմման համապետական քաղաքականությունը: Նախկինում անկախ կազմակերպությունները, ինչպիսիք են՝ Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը (ՄՊԱԾ), Հայաստանի պետական հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի (Հիդրոմետ) ՊՈԱԿ-ը, Հակակարկտային և Պետական պահուստների գործակալությունները, Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը (ՏԱԱԿ) և Հայաստանի փրկարար ծառայությունը (ՀՓԾ) այժմ անցել են ՀՀ ԱԻՆ ենթակայության տակ և վերահսկվում են վերջինիս կողմից:

ՀՀ բնապահպանության նախարարություն. ԲՆ պատասխանատու է երկրում ԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի (ԿՓՇԿ) համակարգման համար, այդ թվում՝ մեղմման և հարմարվողականություն ծրագրերի համակարգման, ինչպես նաև բնական էկոհամակարգերի պահպանության քաղաքականության և կայուն կառավարման համար: Ինչ վերաբերում է աղետների կառավարման տարրերին, ապա ԲՆ զբաղվում է ջրհեղեղների, երաշտի և սողանքների մեղմման, կառավարման և վտանգավոր

թափոնների, դրանց գույքագրման և անվտանգ հեռացման միջոցառումներով: Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգի կենտրոնը շարունակաբար վերահսկում է օդի, ջրի և հողի աղտոտվածությունը, Բնապահպանության պետական տեսչությունը հսկողություն է իրականացնում շրջակա միջավայրի պահպանության օրենսդրության իրականացման նկատմամբ, Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը ջրօգտագործման թույլտվություններ է տալիս և վերահսկում է դրանց կատարումը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն. ԳՆ պատասխանատու է 8 գործառնական ոլորտներում, որոնցից են՝ բուսաբուծությունը, անտառային տնտեսությունը և հեղեղումների կառավարումը, ինչպես նաև այն սողանքները, որոնք ազդում են ջրային համակարգերի՝ գետերի և/կամ ջրանցքների վրա: Սողանքների մեղմման և հողօգտագործման ու բարելավման բաժինները գտնվում են ԳՆ կազմում: Առաջին բաժինն ուսումնասիրում է սողանքների մեղմման տարբերակները, սողանքավտանգ տարածքների վերաբնակեցման հնարավորությունը և ինժեներական բարելավումները, իսկ երկրորդը՝ համակարգում է հողօգտագործման բարելավման միջոցառումները՝ համակարգում է ջրածածկման, հազեցվածության և հեղեղման ծրագրերը, ինչպես նաև պատասխանատու է գյուղատնտեսական հողերի օգտագործման և մելիորացիայի /հողաբարելավման/ քաղաքականության մշակման համար: Նախարարությունը համակարգում է տարածաշրջանային Գյուղատնտեսական աջակցության կենտրոնները և վերահսկում է Սննդի անվտանգության ծրագրի իրականացումը:

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն. ՏԿՆ իր Ջրային տնտեսության պետական կոմիտեի միջոցով կարգավորում է խմելու ջրի, ոռոգման և հողի մելիորացիայի/ջրահեռացման ոլորտը: Նախարարությունը համակարգում է տեղական մակարդակում տարածքային զարգացման պետական քաղաքականության իրականացումը:

ՀՀ քաղաքաշինության նախարարություն. Նախարարությունը պատասխանատու է տարածական պլանավորման կարևորագույն գործառնականների, ինչպես նաև քաղաքաշինության օրենսդրության բարելավման համար: Քաղաքաշինության նախարարությունը նաև պատասխանատու է տարածական պլանավորման մշակման, սողանքավտանգ տարածքների վերաբնակեցման վերաբերյալ առաջարկությունների և տեխնիկական վիճակի բարելավման համար:

Հայաստանի Կարմիր խաչի կազմակերպություն. Աղետների կառավարման իր համապետական կառույցներով հանդերձ, կազմակերպության պարտականությունների ոլորտը ներառում է հիմնական փրկարարական միջոցների վերաբերյալ վերապատրաստման դասընթացների կազմակերպումը և կարիքների գնահատումը:

Ներկայումս, երկիրն ունի բնական աղետների և արտակարգ իրավիճակների արձագանքման զարգացած համակարգ: Սակայն, պարտականությունների և մեղմման միջոցառումների առումով պետական գերատեսչությունների գործառնականները կրկնվում ու համընկնում են և դրանք ռացիոնալացման կարիք ունեն:

5. Կլիմայի փոփոխության ռիսկերի մեղմման անհրաժեշտությունը

Հայաստանը՝ որպես կլիմայի փոփոխության կանխատեսվող ազդեցության խոցելի շրջաններից մեկը, կանգնած է բազմաթիվ մարտահրավերների առաջ: Հայտնի փաստ է, որ Հայաստանում բնական աղետներից շատերը, մասնակիորեն, տեղի են ունում եղանակի բացասական հետևանքների պատճառով, որոնք երկրի կայուն զարգացումը դնում են լուրջ սպառնալիքի տակ: Չնայած դրան, ազգային զարգացման ծրագրերը,

կլիմայագաջայուն հատվածներում ոլորտային ռազմավարությունը և այլն քիչ ուշադրություն են դարձրել կլիմայի փոփոխականության և կլիմայի փոփոխության ռիսկերի գնահատման վրա:

Կլիմայական ռիսկերի կառավարումը ինչ-որ կերպ գործարկվել է տարբեր մակարդակներում և տարբեր արդյունավետությամբ: Այսպիսով, գյուղական համայնքների բնակիչները կառավարել են ռիսկերը, այդ թվում նաև, պարբերաբար, կլիմայի հետ կապված ռիսկերը՝ որպես իրենց առօրյա կյանքի մի մասը: Օգտագործելով իրենց համար մատչելի բոլոր տեղեկությունները, ֆերմերները այնպիսի որոշումներ են կայացնում, որոնք միտված են նվազեցնելու կլիմայական ռիսկերը և շահագործելու կլիմայական հնարավորությունները: Մակայն, կարելի է շատ ավելին անել: Քանի որ Հայաստանի համայնքները ներկայումս չեն օգտվում այն ամենից, ինչ կլիմայագիտությունն է առաջարկում, պարզ է դառնում, որ այն, ինչ անհրաժեշտ է, դա այն մոտեցումն է, որը կլիմայագիտությունն ընդգրկում է զարգացման պլանավորման մեջ և ներգրավում է բոլոր հիմնական շահագրգիռ կողմերի՝ նրանց իրական կարիքները բավարարելու նպատակով: Նման մոտեցման մեջ կիրառվող կլիմայական գործիքները կնպաստեն շահակիցների կողմից որոշումների կայացմանը՝ տրամադրելով այնպիսի համապատասխան տեղեկություններ, որոնք նրանք կարող են կիրառել պրատիկայում:

III. ՄԱԶԾ ՄԻԶԱՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Աղետների ռիսկի նվազեցումն ավելի է ճանաչվում որպես կայուն զարգացմանը հասնելու հիմնական գործոն, չնայած ԱՌՆ համակարգային ինտեգրումը զարգացման պլանավորման և միջոցառումներ մեջ, այն դեռ մնում է որպես մարտահրավեր: Զարգացման նպատակով ներդրումները պարբերական աղետների պատճառով փոշիանում և վտանգվում, և երկրի աճի հետ համընթաց ավելացող սոցիալտնտեսական նշանակության ակտիվները և զարգացող ենթակառուցվածքները ավելի են մեծացնում այդ վնասների/բացասական հետևանքների ծավալները:

Կլիմայի փոփոխությունը որպես զարգացող ռիսկ է ճանաչվում և այն պետք է ընդգրկվի ընթացիկ ԱՌՆ և զարգացման պլանավորման մեջ: Կլիմայի փոփոխության հարմարվողականության վրա աշխատող քաղաքականությունն մշակողները և պրակտիկ մասնագետները պետք է օգտվեն այն փորձից և գիտելիքներից, որոնք ծայրահեղ եղանակային երևույթներին և կրկնվող հիդրոտեղեկությունաբանական վտանգներին դիմակայելու ընթացքում կուտակվել են ԱՌՆ միջազգային համայնքի կողմից:

Կլիմայի փոփոխությունն աղետների ռիսկերի նվազեցման ծրագրի շրջանակներում ներգրավելը բարելավելու է վերլուծական աշխատանքի արդյունքները, քանի որ կլիմայի փոփոխությունը կարող է անյայիսի վտանգներ առաջացնել, որոնց առումով փորձ չկա: Կլիմայի փոփոխությունը, քաղաքաշինական զարգացման, տնտեսական գյուղաբնակավայրերի և զարգացող առողջապահական խնդիրների հետ հանդերձ, արագ տեմպերով փոխում է համայնքների խոցելիության բնույթը:

Մարդկային և տնտեսական կորուստների կրճատման նպատակով 2005-2015թթ. Հյոգոյի գործողությունների՝ Աղետների նկատմամբ ազգերի և համայնքների կայունության ստեղծում ծրագրի (ՀԳԾ) պարտավորեցնում է երկրներին և կազմակերպություններին ինտեգրել ԱՌՆ կայուն զարգացմանը, դիմակայությունը զարգացնելու նպատակով ամրապնդել հաստատությունները, մեխանիզմներն ու կարողությունները, և ռիսկի նվազեցման մոտեցումները սիստեմատիկորեն համակցել արտակարգ իրավիճակների պատրաստվածության, արձագանքման և վերականգնման ծրագրերին: Հայաստանը,

ստորագրելով ՀԳԾ, հանձն է առել նվազեցնլ աղետների ռիսկերը: Ներկայումս, ՀՀ կառավարության կողմից ընդունված “ԱՌՆ Ազգային պլատֆորմի ստեղծման մասին” և “ԱՌՆ Ազգային ռազմավարությունը և դրա իրականացման գործողությունների պլանի բարելավման մասին” որոշումները նախանշում են հիմնական ռազմավարական նպատակը՝ արդյունավետորեն ինտեգրել աղետների ռիսկին առնչվող հարցերը՝ կայուն զարգացման քաղաքականություններին և պլանավորմանը, զարգացնել և ամրապնդել այդ ինստիտուտը, մեխանիզմներն ու կարողությունները, և ռիսկի նվազեցման մոտեցումները պարբերաբար համակցել իրավիճակների պատրաստվածության նախագծման և իրականացման, արձագանքման և վերականգնման ծրագրերին: Հատուկ ուշադրություն է դարձվել համայնքային մակարդակով վտանգների նկատմամբ դիմակայությունը պարբերաբար զարգացնելու նպատակով աղետների կանխարգելման, մեղմման, պատրաստվածության և խոցելիության նվազեցմանը: Կարողությունների զարգացման համար մշակված այդ կարևոր մեխանիզմը 2012թ. սկիզբ է դրել ԱՌՆ տարածաշրջանային թիմերի ձևավորմանը, որոնց նպատակն է տեղական մակարդակում ապահովել ՀԳԾ և ԱՌՆ ռազմավարության գործունեությունը:

Մինչև այժմ, երկրի տարբեր շրջաններում կլիմայի փոփոխության խնդիրները կարող էին լուծված լինել անուղղակիորեն և, հիմնականում, ի պատասխան ազդեցությանը, սակայն ոչ պլանավորման մակարդակով, կամ կանխարգելող կարողությունների զարգացման տեսքով: Սակայն, կլիմայի փոփոխության հետ կապված ազդեցության բարդ խնդիրները կարճաժամկետ, ինչպես նաև երկարաժամկետ կտրվածքով լուծելու համար անհրաժեշտ է հայտնաբերել, դասակարգել և գնահատել ռիսկերը, նրանց տնտեսական և սոցիալական ազդեցության տեսակետից: Մրանք համակարգված և միասնական ձևով դիմակայման/մեղմման միջոցառումների արդյունավետ և գործուն պլանավորման և իրականացման նախադրյալներն են:

Սկսած 2007-2012թթ. ՄԱԶԾ աջակցել է Հայաստանում “Աղետների ազգային պատրաստվածության և ռիսկերի նվազեցման կարողությունների հզորացման” ծրագրի իրականացմանը, որի նպատակն է աջակցել ԱՌՆ ազգային ռազմավարության մշակմանը, բարձրացնել պետության տեղեկատվության կարողությունները և հանրային իրազեկվածությունը, ինչպես նաև հզորացնել ռիսկերի հայտնաբերման, գնահատման և մոնիթորինգի համակարգերը՝ նպաստելով վաղ ահազանգման սխեմաների աշխատանքին: Հայաստանը 2012թ. աղետների ռիսկի նվազեցումը ընդունել է որպես զարգացման գործընթացում գերակա խնդիր և ԱՌՆ ընդգրկել է Ազգային անվտանգության ռազմավարության մեջ: Ըստ 2012-2015թթ. գործողությունների պլանի, ԱՌՆ ռազմավարությունն ընդգրկվելու է ճյուղային զարգացման ծրագրերում:

ՄԱԶԾ իրականացրել է հետազոտություն Հայաստանի տնտեսության չորս՝ էներգետիկայի, գյուղատնտեսության, ջրային և անտառային տնտեսություն ճյուղերում կլիմայի փոփոխության սոցիալտնտեսական հետևանքների մասին: Ուսումնասիրությունը կատարվել է Ստոկհոլմի Բնապահպանական ինստիտուտի հետ համագործակցությամբ 2009թ., և հիմնական եզրակացությունները տրամադրվել են երկրի շահագրգիռ կողմերին: Հիմնական առաջարկությունը կայանում էր հետևյալում՝ “պաշտպանել գյուղական և ցածր եկամուտ ունեցող համայնքներին” և “կանխարգելման և արտակարգ իրավիճակների արձագանքման պատրաստվածության միջոցով՝ նախապատրաստվել բնական աղետներին”: Ուղեցույցները մշակվել էին ՄԱԶԾ կլիմայակայուն ծրագրի համար և սկսած 2009թ. կիրառվում էին Համայնքային զարգացման ծրագրի հարցումների նպատակով:

Կլիմային ռիսկերի կառավարման տեխնիկական օգնության աջակցման ծրագիրն (ԿՌԿ - SOUՕ) իրականացվել է 2008-2012թթ՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության

առընթեր Հայաստանի պետական հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն հետ սերտ համագործակցությամբ: Ծրագիրը գնահատել է ընթացիկ զարգացումների պայմանները, կլիմայի փոփոխականությունը և ջերմաստիճանի բարձրացման և ձյան ծածկույթի նվազման տեսանկյունից միտումները և կանխատեսվել է, որ կլիմայական միտումները հանգեցնելու են ավելի հաճախակի և դաժան ծայրահեղ երևույթների՝ հատուկ ընդգծելով գյուղատնտեսության ոլորտի վրա կլիմայի ազդեցության հետևանքներն ու ռիսկերը: Զեկույցում վերլուծության են ենթարկվել կլիմայական ռիսկի կառավարման ներկա վիճակը ինստիտուցիոնալ և քաղաքականության և կարողությունների գնահատման տեսանկյունից, և կարևորվել է գյուղատնտեսության և գյուղատնտեսական մթերքների վերամշակող ճյուղերում կլիմայական ռիսկի կառավարումը, ելնելով կլիմայական ռիսկերի նկատմամբ այդ ոլորտների բարձր խոցելիությունից և զգայունությունից:

IV. ԾՐԱԳՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Առաջարկվող ծրագիրը կառուցվելու է վերջին տարիներին Հայաստանում աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ձեռքբերումների հենքի վրա, որոնցից են՝ Կլիմային ռիսկերի կառավարման տեխնիկական օգնության աջակցման ծրագրի արդյունքների գնահատումը, գյուղատնտեսության ոլորտում ՀԲ -ի կլիմայի փոփոխության ռիսկի ուսումնասիրությունը, և աշխատելու է ՄԱԶԾ կողմից ֆինանսավորվող “Աղետների ռիսկի նվազեցման ազգային կարողությունների հզորացում” (2013-2015) ծրագրի հետ սերտ համագործակցությամբ, ինչը կամրապնդի երկու ծրագիրն էլ: Մասնավորապես, առաջարկվող նախագիծը կօժանդակի ազգային և տեղական մակարդակներում ԱՌՆ և ԿՌՄ քաղաքականության և իսստիտուտների հետագա զարգացմանը, բոլոր մակարդակներում կարողությունների զարգացմանը, ռիսկի գնահատման բարելավմանը, տեղեկատվության կառավարմանը և վաղ ահազանգմանը, ինչպես նաև 2009-2012թթ. ընթացքում մշակված և սրբագրված տեղական մակարդակով ռիսկերի կառավարման մոտեցումների հետագա կատարելագործմանը: Ծրագիրը օգտագործելու է ՄԱԶԾ Կլիմայի փոփոխության ծրագրերի կուտակված փորձը, որը 1996թ. ի վեր աշխատում է ՀՀ բնապահպանության նախարարության (ԲՆ) սերտ համակարգման ներքո: ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի իրականացման ազգային լիազորված մարմինը ԲՆ-ն է, որն էլ պատասխանատու է կլիմայի փոփոխության գործողությունների պլանի համակարգման համար, որը հաստատվում է կառավարության կողմից յուրաքանչյուր 5 տարի ժամանակահատվածի համար: Կլիմայի փոփոխության ծրագրի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունները ուղղված են Հայաստանի տարբեր մարզերի համար կլիմայի փոփոխության սցենարների մշակմանը, կլիմայի փոփոխության սոցիալտնտեսական ազդեցության գնահատմանը, կլիմայի փոփոխության նկատմամբ լեռնային անտառների էկոհամակարգերի դիմակայության բարձրացման նպատակով հարմարվողականության միջոցառումների փորձարկմանը, ընտրված գետավազանների և շրջանների խոցելիության գնահատմանը, ինչպես նաև ՄԱԿ ԿՓՇԿ շրջանակներում կլիմայի փոփոխության մասին Հայաստանի Հանրապետության առաջին և երկրորդ ազգային հաղորդագրությունների նախապատրաստմանը:

Ծրագիրը գործելու է կլիմայական ռիսկի կառավարման համար առանցքային ոլորտներում և մեկնարկային կետերում՝ աջակցելով կլիմայական ռիսկի կառավարման ինտեգրմանն աղետների ռիսկի նվազեցման 2012թ. ընդունված ազգային ռազմավարությանը, բարելավելով տեղական մակարդակում պլանավորման գործընթացը, հիդրոոդերևութաբանության վարչության և ահազանգման տարածման

կարողությունների կատարելագործումը և ագրոգիտասփյուռ ծառայություններ միջոցով՝ ամրապնդելով վաղ ահազանգման համակարգը, և լավագույն փորձի օրինակների վրա՝ համայնքային մակարդակով փորձարկելով կլիմայական ռիսկերի կառավարման մոտեցումները ու միջոցառումները:

ՄԱԶԾ աղետների ռիսկերի նվազեցման և ռիսկերի կառավարման միջամտությունից ստացված գիտելիքները կօգտագործվեն սույն ծրագրում՝ ապահովելով ռիսկի գնահատման, պլանավորման, վաղ ահազանգման և համայնքային մակարդակում՝ աղետների և կլիմայական ռիսկերի կառավարման ոլորտներում ծրագրի միջամտության կայունությունը: Ծրագիրն իրականացվելու է ազգային և համայնքային մակարդակներով: Կլիմայական ռիսկերի արդյունավետ կառավարման և ԱՌՆԱՊ-ի հետ սերտորեն համագործակցելու նպատակով՝ ծրագիրը ստեղծելու է բազմաշահակից համագործակցություն: Խրախուսվելու է ազգային և տարածաշրջանային պետական և մասնավոր կառույցների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավվածությունը: Օգտագործվելու է ՄԱԶԾ ժողովրդավարական կառավարման ծրագրերի կողմից իրականացվող ծրագրերի միջոցով հատկապես որոշումների կայացման մեջ կանանց ներգրավման և հավասար հնարավորությունների քարոզչությամբ զբաղվող ՀԿ -ների ցանցը: Այս բոլորի մեջ ընդգրկվելու են տարբեր պետական հաստատություններ, ինչպես օրինակ՝ ԱԻՆ առընթեր Հայաստանի հիօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայությունը, Ճգնաժամերի կառավարման պետական ակադեմիան և այլ մարմիններ, գիտահետազոտական ազգային ինստիտուտներ և համալսարաններ, օրինակ՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարան, զանազան հասարակական կազմակերպություններ, քանի որ նրանք ակտիվորեն աշխատում են տեղական մակարդակներում և հաճախ խոցելի համայնքների ներկայացուցիչներ են հանդիսանում, ինչպես նաև անձամբ համայնքները՝ այն անձանց ներդրումով ու մասնակցությամբ, ովքեր, նախ, դիմակայում են այդ ռիսկերին՝ ելնելով համայնքների փաստացի կարիքներից և, հետո, իրենց համայնքներում կլիմայական ռիսկի կառավարման վերջնական մատուցողներն են:

Հայաստանը գտնվում է կլիմայի փոփոխականության և փոփոխության աղդեցության տակ, որտեղ տարբեր բնական աղետների, ինչպիսիք են՝ երաշտները, սողանքների և այլն ուժգնությունը, հաճախականությունը և ծանրությունը լրջորեն ազդել են գյուղական բնակչության կողմից դրանց դիմակայելու ավանդական կարողությունների վրա և դրանք՝ հատկապես բացասաբար են աղդում սոցիալապես անապահով բնակիչների վրա՝ աղքատների և ծայրահեղ աղքատների, կանանց խնամքի տակ մնացած ընտանիքների, միայն գյուղատնտեսական արտադրանքից ստացվող եկամուտներով ապրող ընտանիքների վրա: Ծրագրի հիմնական սկզբունքը աղետների ռիսկի նվազեցումը և կլիմայական ռիսկի կառավարումը տարածաշրջանային զարգացման պլանավորման գործընթացի մեջ ներգրավելը, տեղական մակարդակով կարողությունների զարգացումը, կլիմայի փոփոխության ռիսկերի մեղմումն ու պատրաստվածությունը և կլիմայի ու աղետների ռիսկի նվազեցման կառավարման մեջ գենդերային խնդիրների լուծումն է:

Ծրագիրը կաջակցի տեղական զարգացման պլանավորման մեջ ԿՌՄ ինտեգրելու կորողությունների զարգացման միջոցով կլիմայական ռիսկերի կառավարումը հիմնական ծրագրերում ընդգրկելու գործընթացին: Կլիմայական ռիսկի կառավարումը և մեղմումը հիմնական ծրագրերում ընդգրկելը խիստ կախված է դրանք ուղղակիորեն իրականացնող տեղական ինքնակառավարման միարմինների համագործակցությունից և աջակցությունից: Տեղական մակարդակի ղեկավարությունից պահանջվող փոխգործակցությանը և մասնակցությանը կարելի կլինի հասնել կառավարության գործընկերների և համայնքի անդամների հետ խորհրդակցելու և տվյալ պայմաններին

հարմարեցված ուսումնական նյութերի մշակման, ինչպես նաև փորձնական աշխատանքների իրականացման միջոցով: Ծրագիրը տեղական ինքնակառավարման մարմիններին խորհուրդներ կտա զարգացման պլանավորման աշխատանքներում հնարավոր գործողությունների վերաբերյալ և նրանց պատշաճ կերպով կտեղեկացնի առնչվող վտանգների մասին: Հիմնական ձեռքբերումը կլինի տեղական զարգացման քաղաքականության մեջ կլիմայի փոփոխության հարցերի ընդգրկելը և տեղական քաղաքականության մեջ կլիմայի փոփոխության ռիսկերի հետևյալ հիմնական կետերը որպես առաջնահերթության դիտարկելը, որոնք են՝ կլիմայի փոփոխությունը ընդհանուր ծրագրերում ընդգրկելը տեղական և տարածաշրջանային գործընկերության միջոցով՝ հանուն կայուն զարգացման, օժանդակող տեղեկատվություն, կրթություն, հաղորդակցում և հետազոտական ու ստեղծագործական աշխատանք, այնպիսի գործելակերպի խրախուսում, որն ուղղակի օգուտներ կբերի համայնքներին:

Ծրագիրը համակարգելու է տարբեր շահառուներին՝ աղետների պատրաստվածության և արտակարգ իրավիճակների արձագանքման գործընթացներին արդյունավետ մասնակցությունը խրախուսելու նպատակով: Մրանով, ծրագիրն իրականացնող տարբեր համագործակցող հաստատությունների համար ավելի դյուրին կլինի տեղական շահակիցների հետ համագործակցելը և վերջիններիս մասնակցությունն ապահովելը:

Ծրագիրը նպաստելու է կարողությունների շարունակական զարգացումը՝ անհատական և համայնքային մակարդակներում և կատարելագործելու է տեղեկատվության հավաքագրման և փոխանակման համակարգը: Այն բարելավելու է տեղական հաստատությունների ինստիտուցիոնալ և տեխնիկական կարողությունները՝ նրանց կողմից կլիմային առնչվող ռիսկերի կառավարումը կատարելագործելու և ներկա ու ապագա բնածին վտանգներին տեղական մակարդակով պատրաստվածությունը խթանելու նպատակով: Պլանավորման գործընթացի մեջ ներգրավման և հնարավոր ռիսկերի մասին տեղեկացման միջոցով, ծրագիրը բարելավելու է ֆերմերների ապրուստի միջոցների կայունությունը, որոնք չափազանց խոցելի են հաճախակի կրկնվող ծայրահեղ կլիմայական երևույթների նկատմամբ: Կլիմայի փոփոխության հարմարվողականության իրականացման նպատակով ծրագիրը աջակցելու է կլիմայի նկատմամբ խոցելի համայնքների հայտնաբերմանը, հավաստելու է բնիկ գյուղացիական պրակտիկան ու դիմակայման մեխանիզմները, վերապատրաստման դասընթացներ է անցկացնելու և փորձնական տեխնիկական և ֆինանսական աջակցություն է մատուցելու կլիմայից տուժած համայնքներում՝ ռիսկի նվազեցման միջոցառումներ իրականացնելու համար: Այն օգնելու է հասկանալ կլիմայական ռիսկի կառավարումը՝ որպես կլիմայի փոփոխության բացասական հետևանքները նվազեցնելու առանցքային ռազմավարություն, և օժանդակելու է կլիմայի փոփոխության ռիսկերի քարտեզագրմանը և վաղ ահազանգման համակարգի կիրառմանը:

Ծրագիրն աշխատելու է կանանց զարգացման ուղղությամբ և զբաղվելու է գենդերային տարբերությամբ պայմանավորված խոցելիության հարցերով: Ծրագրի գենդերային միջոցառումներն իրականացվելու են հետևյալ հիմնական ուղղություններով՝

- Խաչաձև գործողություններ, որոնք ապահովում են, որ քաղաքականությունը լինի գենդերայզայուն, ապահովու են գենդերային տարանջատված վերլուծություն, նպատակաուղղված են հատկապես խոցելի սոցիալական խմբերին (ներառյալ՝ կանանց վաղ ահազանգման և կլիմայի վերաբերյալ տեղեկատվական գործողությունները),
- Օժանդակություն գյուղական համայնքներում ընտրված ԿՌՄ միջոցառումների իրականացմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց կողմից գլխավորած ֆերմերային տնտեսությունների աջակցությանը, հաշվի առնելով այն

հանգամանքը, որ գյուղատնտեսության ոլորտում կանանց կողմից վարվող տնային տնտեսությունների քանակը ավելանում է, որը պայմանավորված է ավելի լավ եկամտի համար տղամարդկանց արտագնա աշխատանքով, ծրագիրը նպաստելու է կարողությունների զարգացման միջոցառումներում գենդերային հարցերի ընդգրկմանը, ինչպես նաև խթանելու է կանանց մասնակցությունը նախատեսված վերապատրաստման դասընթացներին:

V. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ, ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆՔԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է բարձրացնել կլիմայի նկատմամբ դիմակայությունը Հայաստանի ամենաբարձր ռիսկային ոլորտներում և բնագավառներում և ինստիտուցիոնալ գիտելիքների ու պատասխանատվության ուժեղացման միջոցով՝ ապահովել դրանց նկատմամբ ազգային սեփականատիրական մոտեցումը: Հատուկ նպատակներն են՝ մեղմել գյուղական համայնքներում կլիմայի փոփոխության ռիսկերը՝ կլիմայական ռիսկերի կառավարումը գյուղական զարգացման ընդհանուր պլանավորման գործընթացում ընդգրկելու, գյուղատնտեսական պրակտիկայում ռիսկերի մեղմման միջոցառումների կիրառման/փորձարկման, գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխության սպառնալիքների մասին շահակիցների իրազեկվածության բարձրացման, և խոցելի համայնքներում ռիսկերի կառավարման և հարմարողականության կարողությունների հզորացման միջոցով:

Ծրագրի ձեռքբերումը. “Տեղական մակարդակում կլիմայական ռիսկերի կառավարումը փաստացիորեն ուժեղացված է, խթանված է կլիմայի փոփոխության ռիսկերի նկատմամբ խոցելի գյուղական համայնքների դիմակայությունը”:

Առաջարկվող ծրագրի նպատակներն իրականացվելու են հետևյալ արդյունքների միջոցով՝

- Արդյունք 1. Կլիմայական ռիսկերի կառավարման ավելի սերտ ինտեգրումը ԱՌՆ ազգային ռազմավարությանն աջակցվում և խրախուսվում է գյուղական զարգացման պլանավորման միջոցով:
- Արդյունք 2. Ազգային հաստատությունների կարողությունների հզորացումը ազգային և համայնքային մակարդակներում՝ կլիմայական ռիսկի ապացույցների վրա հիմնված կառավարման նպատակով:
- Արդյունք 3. Օժանդակություն գյուղական համայնքներում ընտրված ԿՌՄ միջոցառումների իրականացմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց կողմից գլխավորած ֆերմերային տնտեսությունների աջակցությանը:

Արդյունք 1. Կլիմայական ռիսկերի կառավարման ավելի սերտ ինտեգրումը ԱՌՆ ազգային ռազմավարությանն աջակցվում և խրախուսվում է գյուղական զարգացման պլանավորման միջոցով:

Միջոցառում 1.1. Ուսումնասիրել կլիմայի փոփոխականությանն առնչվող ներկայիս ռիսկերը՝ ԿՌՄ ռազմավարությունների մշակման միջոցով, կարճաժամկետից՝ երկարաժամկետ հեռանկարում օգտվել կլիմայի փոփոխականության և կլիմայի փոփոխության առաջացրած ռիսկերի և հետևանքների դիմակայման փորձից:

Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության խնդիրների ինտեգրման մասին տեղեկացվածության անհրաժեշտությունն աճում է և ընդլրկում է

զարգացման տարբեր գործակալությունների և դերակատարների կողմից մի շարք ծավալուն միջոցառումներ: Նրանք ներգրավված են մի շարք նախաձեռնություններում, այդ թվում՝ աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի հետազոտման և գնահատման գործիքների մշակման, փորձարկման և տարածման աշխատանքներում: Սակայն, կա մի որոշակի բաց ապացույցների վրա հիմնված այն մեթոդաբանության կիրառման առումով, ըստ որի ռիսկի կառավարման մոտեցումը հանգեցվում է գործնական և արդյունավետ այնպիսի միջոցառումների, որոնցով աղետների ռիսկի նվազեցումը և կլիմայի փոփոխության մեղմումն ու հարմարվողականությունն ինտեգրում են հիմնական զարգացման գործողություններին:

Իրականացվող հիմնական միջոցառումները հետևյալն են՝ ուսումնասիրել կլիմայի փոփոխականության և կլիմայի փոփոխության ռիսկերի համաշխարհային փորձի մասին գրականությունը, պետական հիդրոոդերևութաբանական ծառայության և Հայաստանում կլիմայական ռիսկերի հետ կապված հետևանքների մասին մինչ օրս գրանցված տվյալները և կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումները՝ գյուղական համայնքների և գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայությունը բարելավելու նպատակով, որոնք ուղղված կլինեն արդյունավետ միջոցառումների իրականացմանը և կլիմայական ռիսկերի մեղմման հիմնական տարբերակների բացահայտմանը:

Այս մոտեցումը բաղկացած կլինի կլիմայական ռիսկի հետազոտությունից և խոցելիության վերլուծությունից, ռիսկի նվազեցման ռազմավարության ընտրությունից և գնահատումից, և ռիսկի նվազեցման միջոցառումների ընտրությունից և իրականացումից, ինչպես նաև հիմնական խոցելի այն խմբերի բացահայտումից, որոնք աջակցության և դիմակայման կարողությունների կատարելագործման կարիք ունեն: Ռիսկերի գնահատումից քաղված տեղեկությունները օգտագործվելու են ռիսկերի նվազեցման կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարություններ մշակող օգտատերերին աջակցելու համար:

Այս ռազմավարություններն ընդգրկելու են բարելավված ընթացակարգերի և բարելավված արտակարգ իրավիճակների արձագանքման պլանների մշակումը: Այն կօգնի նվազեցնել և կառավարել կլիմայի փոփոխությունից առաջացող ռիսկերը և հետևանքները՝ գործուն և, ծախսերի առումով, շահավետ ձևով, և միևնույն ժամանակ կբավարարի կարիքները:

Միջոցառում 1.2. Տարբեր համայնքներում կլիմայական ռիսկի ընկալման վերաբերյալ խորհրդակցություններ ծավալել շահառուների լայն խմբի հետ, մշակել ուղեցույցներ և իրականացնել կլիմայական ռիսկի կառավարման պլանների մշակումն ու ինտեգրումը հեշտացնելուն ուղղված մասնագիտացված դասընթացներ:

Այս միջոցառումն ընդգրկելու է ազգային և տեղական ինքնակառավարման մարմինների, որոշում կայացնողների, պլանավորողների, արտակարգ իրավիճակների արձագանքման կազմակերպությունների, համայնքների և այլ շահագրգիռ կողմերի հետ իրականացվող խորհրդակցություններ, որոնք ծավալվելու են բնական աղետներին արձագանքման նախապատրաստման, մեղմման առկա պլաններն ուսումնասիրելու և առկա ԱՌՆ ծրագրերերում հիմնական մարտահրավերները բացահայտելու նպատակով:

Այս միջոցառումն ընդգրկելու է նաև համայնքների համար կլիմայական ռիսկի բացահայտման ու գնահատման և աղետների ռիսկերի պլանավորման ինտեգրման

ուղեցույցի մշակումը: Որպես այդպիսին, այս ուղեցույցը կօգնի օգտատերերին կլիմայական վտանգների, այդ թվում՝ երաշտների, ջրհեղեղների, սողանքների, հողերի էրոզիայի, փոթորիկների, կարկտահարման և այլն խնդիրները լուծելու համար: Այն, համապատասխան դաշտային դիտարկումների և ողջամիտ սպասելիքների և անելիքների վերլուծությունների հիման վրա, խրախուսելու է և սինթեզված ու ստանդարտացված ուղեցույցներ է ստեղծելու: Այն նաև ուղեցույցներ է տրամադրելու վերջնական սպառող համայնքների կողմից իմաստալից ու կիրառական դիտարկումներ, կարծիքներ և եզրակացություններ ներկայացնելու նպատակով:

Վերապատրաստման մասնագիտացված դասընթացներն ուղղված կլինեն կլիմայական ռիսկի ընկալմանը և բացերի ու ԱՌՆ-ԿՌԿ միջամտության տարբերակների բացահայտմանը, և այն մասին, թե ինչպես կարելի է ԿՌԿ-ն ընդգրկել ընթացիկ և նախատեսվող ընդհանուր զարգացման ծրագրերում:

Միջոցառում 1.3. Բարելավել խոցելի համայնքների ռիսկերի նվազեցման և հարմարվողականության կարողությունները՝ կլիմայից առաջացող ռիսկերը և հետևանքները հասկանալու, դրանց նախապատրաստվելու և պլանավորելու համար:

Համայնքի անդամները պետք է տեղյակ լինեն և հասկանան տեղական աղետների վտանգը և դրանց համապատասխան ռիսկերը, և վերջիններիս պետք է խրախուսել նվազեցնել իրենց սեփական ռիսկերը և հանուն իրենց առաջ ծառայած ռիսկերի՝ վերածվել կառավարության և այլ դերակատարների պատասխանատու գործընկերների:

Կլիմայի փոփոխության հետևանքներով չի կարելի արդյունավետորեն զբաղվել առանց գյուղատնտեսության քաղաքականությունը կլիմայի փոփոխությանը համապատասխանեցնելու հստակ ծրագրի և առանցքային գյուղատնտեսական ինստիտուտի կարողությունների հղորացման: Նման ծրագրի մշակման համար պետք է խորհրդակցել շահագրգիռ կողմերի, ֆերմերների, մասնավորապես՝ կանանց կողմից վարվող տնտեսությունների, և գյուղատնտեսության տեղական փորձագետների հետ: Կլիմայի փոփոխությանը ոլորտի հարմարեցման առավել արդյունավետ ծրագրերը կնպաստեն գյուղատնտեսության ոլորտի բարելավմանը: Ծրագիրը, նպատակային դասընթացների և սեմինարների միջոցով, կբարձրացնի նաև ֆերմերներային խմբերի “կլիմայագրագիտությունը”:

Միջոցառում 1.4. Մշակել ԿՌՄ հարցերը ազգային ԱՌՆ ռազմավարությանը և տարածական զարգացման պլանավորման մեջ ինտեգրելու առաջարկություններ:

Մշակված առաջարկությունները կառուցվելու են այպես, որպեսզի որոշում կայացնողներին տեղեկությունների այնպիսի ծավալ տրամադրվի, որն անհրաժեշտ է աղետների և կլիմայական ռիսկի կառավարման միջոցառումներում ներդրումների վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելու համար: Դրա կառուցվածքի միջոցով հնարավոր կլինի հետևել առկա պլանավորման և կառավարման պրակտիկայում որոշումների կայացման գործընթացին և կօգնի գնահատել ֆինանսական և ռազմավարական պլանավորման առաջնահերթությունները:

Արդյունք 2. Ազգային հաստատությունների կարողությունների հզորացումը ազգային և համայնքային մակարդակներում՝ կլիմայական ռիսկի՝ ապացույցների վրա հիմնված կառավարման նպատակով:

Միջոցառում 2.1. Ուղենիշներ տրամադրել՝ կլիմայի փոփոխության հիմնական ռիսկերը բացահայտելու և դասակարգելու, գյուղական համայնքներում գյուղատնտեսության և էկոհամակարգերի վրա դրանց սոցիալ-տնտեսական հետևանքների ազդեցությունը գնահատելու համար:

Մարդիկ պետք է հասկանան իրենց ռիսկերը և իմանան, թե ինչպես պաշտպանվել բնական և կլիմայական աղետներից: Այսպիսով, իրազեկվածությունը պետք է մեծ նշանակություն ունենա մարդկանց կյանքում, և ցանկացած կոնկրետ տեղեկատվություն պետք է գործնական քայլեր պարունակի այն մասին, թե ինչ անել, որպեսզի նվազեցնել ռիսկը: Նման տեղեկատվությունը ստանալով, ֆերմերները կկարողանան իրենք իրենց պաշտպանել հերթական հիդրոոդերևութաբանական վտանգներից, ինչպես նաև կլիմայի փոփոխության կանխատեսված սցենարներից: Ուսումնական նյութերի միջոցով ստացած ռիսկերի նվազեցման և աղետների նախանշանների բացահայտված և տարածված ավանդական և նոր հմտությունները կարևոր դեր են խաղալու հանրային իրազեկման բարձրացման գործում:

Միջոցառում 2.2. Աջակցել Հիդրոմետ ծառայությանը և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ կատարելագործելու տվյալների հավաքագրման և վերլուծության գործընթացները՝ օդերևութաբանական վտանգների, ինչպիսիք են՝ երաշտը, ջրհեղեղը և այլն, կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսման համար, դրանով նպաստելով գյուղական վայրերում կլիմայի նկատմամբ դիմակայությունը:

Ֆերմերները ներկայումս օգտվում են հեռուստատեսությամբ հաղորդվող հիդրոոդերևութաբանական կանխատեսումներից: Սակայն այդ կանխատեսումները չափազանց լայնածավալ լինելով՝ գյուղատնտեսության համար պատշաճ տեղեկատվություն չեն տրամադրում: Այսպիսով, հիդրոոդերևութաբանական տվյալների ձեռքբերման տեղական ավելի լավ հնարավորությունների խիստ անհրաժեշտություն կա, հատկապես՝ ջերմաստիճանի և տեղումների կարճաժամկետ կանխատեսման համար: Այդ հնարավորությունները կարճաժամկետ կտրվածքով անհապաղ անհրաժեշտ են գյուղատնտեսական մակարդակով որոշումների կայացմանն օժանդակելու համար: Հիդրոոդերևութաբանական ներդրումների համեմատաբար համեստ ծախսերի և օգուտների տնտեսական վերլուծությունը, որոնք ներառում են նաև վերապատրաստման և տարեկան գործառնական ծախսերը ենթադրում է, որ նման ծրագրից օգուտները, ամենայն հավանականությամբ, կգերազանցեն ծախսերը:

Ֆերմերների համար գյուղատնտեսության կարիքներին համապատասխանող եղանակային կանխատեսումների մատչելիության բարելավումը զգալի արդյունքների կհանգեցնի անմիջապես, հենց որ դրանք իրականացվեն, և ֆերմերները հնարավորություն ունենան ինքնուրույն հարմարեցնել իրենց աշխատանքները կլիմայի փոփոխությանը:

Առաջարկվող ծրագիրը կաջակցի հիդրոոդերևութաբանական գործակալությանը բարելավելու կլիմայի վերաբերյալ այն տեղեկատվության մատչելիությունը և որակը, որոնք են՝ 1) պատմական տվյալներ, որոնք կօգնեն լուսաբանել միտումները, ապահովել կլիմայի վիճակագրությունը, սահմանել ընթացիկ տվյալների բովանդակությունը և հնարավորություն կտան փոփոխականությանը և տեղի ունեցած ծայրահեղություններին քանակական տեսք տալ, 2) իրական ժամանակի տվյալներ, այսինքն՝ կլիմայի ներկայիս դիտարկումները, 3) կլիմայի տեսություն, այսինքն՝ կլիմայի կանխատեսումները՝ սկսած եղանակի երկարաժամկետ կանխատեսումից մինչև կլիմայի փոփոխության միջնաժամկետ կանխատեսումները: Հայաստանի հիդրոոդերևութաբանական գործակալությունը

պատմական տվյալների լավ շտեմարան և դիտակայանների ցանց ունի: Սույն ծրագիրը կօժանդակի ներկա և կանխատեսվող տվյալների հիման վրա վերլուծությունների կազմմանը և մշակմանը, ծայրահեղ երևույթների միտումների և ազդեցությունների վերաբերյալ տեղեկատվական երկկողմանի հոսքերի ստեղծմանը, ինչպես նաև հիդրոոդերևութաբանական ծառայությունների, ագրոգիտահամասփյուռի և ֆերմերային խմբերի միջև համակարգման ու հաղորդակցման ուժեղացմանը:

Կլիմայի սեզոնային կանխատեսումները կարող են շատ օգտակար լինել գյուղատնտեսական աշխատանքների պլանավորման և վաղ ահազանգման և արձագանքման պլանավորման համար: Դրանք կարող են օգնել գյուղատնտեսական ոլորտի որոշում կայացնողներին կատարելագործելու կլիմայական ռիսկերի կառավարումը: Այդուհանդերձ, ժողովրդի մոտ կանխատեսումների նկատմամբ վստահություն ներշնչելու համար կրթության և զարգացման հսկայական ներդրումներ կպահանջվեն: Այս տեխնոլոգիայից առավելագույնս օգուտ ստանալու համար անհրաժեշտ կլինի ամրապնդել հիդրոոդերևութաբանական ծառայությունների և գյուղատնտեսական գիտահետազոտական և գիտասփյուռ աշխատանքների միջև կապերը, կլիմայի կանխատեսման տվյալներն ինտեգրել տեղեկատվության տարածման առկա սխեմաներին և կանխատեսումները կապել գյուղատնտեսության նյութատեխնիկական մատակարարման հասանելիության ճիշտ ժամկետներին: Մարտահրավերը՝ հավանական տեղեկատվությունն՝ իր հստակ անորոշություններով որոշումների կայացման մեջ ընդգրկելն է: Կգնահատվեն իրական ժամանակում տվյալների, կարճաժամկետ և միջնաժամկետ կանխատեսումների ստացման նպատակով բջջային կապի օպերատորների հետ համագործակցության հնարավորությունները՝ ելնելով ծածկույթից և շահառուների/ֆերմերների կողմից սմարթֆոնների կիրառումից:

Միջոցառում 2.3: Մշակել երկրի և ընտրված համայնքների մասշտաբին համապատասխան կլիմայի և աղետների ռիսկի քարտեզներ՝ վնասների մասին պատմական տվյալների, հիդրոմետ տվյալների և կլիմայական ռիսկի կանխատեսումների հիման վրա, աջակցել քարտեզների ամենամյա թարմացման և փոփոխությունների մեխանիզմի ստեղծմանը:

Վտանգի քարտեզագրումն անհրաժեշտ է տեղական ինքնակառավարման մարմինների ու մարզերի համար, և տվյալների հավաքագրումն այս գործընթացի հիմնական մարտահրավերն է հանդիսանում: Քարտեզները կօգեն պլանավորել մեղմման միջոցառումները, դրանք հասանելի կլինեն ԱԻՆ կայքում, և կդառնան սեյսմիկ և սողանքային վտանգի գոտիների ներկայիս քարտեզների հավելվածը:

Միջոցառում 2.4: Ստեղծել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանողներից բաղկացած մի կամավորական խումբ՝ գյուղական համայնքներում կանանց, տղամարդկանց և տարբեր տարիքային խմբերի առաջ ծառայած կլիմային և աղետներին առնչվող խնդիրների վերլուծության և ուսումնասիրության համար:

ՄԱԶՕ Կլիմայի փոփոխության ծրագիրը համալսարանների հետ մի ցանց է ստեղծել, որի նպատակն է խրախուսել ուսումնական ծրագրերում կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության դասընթացների ընդգրկումը: Մասնագետները / դասախոսները ներգրավված են կլիմայի փոփոխության հետևանքներին զգայուն գենդերային և տարիքային հարցերի գնահատման գործում և կամավորական խմբերին կծանոթացնեն և կսովորացնեն տվյալների հավաքագրման և վերլուծության գործընթացին:

Միջոցառում 2.5. Նպաստել լավագույն համաշխարհային փորձի ուսումնասիրությանը և Հայաստանի վաղ ահազանգման համակարգում դրա կիրառմանը: Ընտրված վաղ ահազանգման համակարգը փորձարկել մեկ աղետավտանգ/կլիմայազգայուն շրջանում (մարզում):

Ռիսկի բացահայտման և վաղ ահազանգման համակարգերը՝ կլիմայի փոփոխությանը առաջացող բնական աղետների կրկնությունը կառավարելու և խոցելի համայնքներում ռիսկի նվազեցման ռազմավարությունների հիմնական և կարևոր մեխանիզմներն են: Ահազանգումը համայնքի պատրաստվածության հիմնական բաղադրիչն է: Ծրագիրն աշխատելու է համաշխարհային լավագույն փորձի գնահատման ուղղությամբ և վաղ ահազանգման համակարգերի ինստիտուցիոնալ գործընկերության ուղեցույցներ է մշակելու, ինչպես նաև առնվազն մեկ աղետավտանգ համայնքում վաղ ահազանգման փորձնական համակարգ է իրականացնելու: Հաշվի առնելով կլիմայի փոփոխականությանը, ծրագիրը կփորձի որոշել և ընտրված փորձնական միջոցառումը կապել մի հնարավոր երկարաժամկետ ծրագրի հետ՝ ապագայում ավելի արդյունավետ վաղ ահազանգման համակարգ ունենալու նպատակով:

Միջոցառում 2.6. Հիդրոմետ ծառայության կատարելագործված կարողությունների և տարածաշրջանային ագրոգիտասփյուռի կողմից գյուղական շահառուների համար հարմարեցված տեղեկատվության մատուցման ծառայությունների միջոցով՝ ամրապնդել վաղ ահազանգման համակարգերը:

Երկրի արտակարգ իրավիճակների արձագանքման համակարգի՝ աղետներին համարժեք արձագանքման կարողությունը մեծապես կախված է իր վաղ ահազանգման և արտակարգ համակարգերի արդյունավետությունից: Եվ, բնական աղետներին պատրաստ լինելու և դրանց արդյունավետ, գործուն և ճիշտ ժամանակին արձագանքելու համար պետք է ունենալ լավ կազմակերպված և փորձարկված ահազանգման համակարգեր: Դրա համար անհրաժեշտ կլինի հանրապետության կառավարության, ինչպես նաև տեղական համայնքների օժանդակությունը, քանի որ տարերային աղետներին ենթակա շրջաններում առաջին արձագանքողները նրանք են:

Վաղ ահազանգման համակարգը բազմաթիվ մակարդակներում և գործակալությունների միջև համակարգման և համագործակցության կարիք ունի: Կարճաժամկետ կանխատեսումները, վտանգի մասին ձեռքբերված տվյալները պետք է վերլուծել՝ ռիսկի մասին տեղեկատվություն պատրաստելու համար: Այնուհետև, այն պետք է հաղորդել կապի և տարածման մեխանիզմների միջոցով՝ տեղերում աղետների պատրաստվածության և վաղ արձագանքման միջոցառումներ իրականացնելու համար: Այնպիսով, անհրաժեշտ է բարելավել և ներդրումներ կատարել վաղ ահազանգման համակարգերի բոլոր բաղադրիչներում՝ սկսած կենտրոնական կառավարությունից, որը կարողությունների զարգացման միջոցով ԱՌԿ համակարգման մեխանիզմներն է տրամադրում այն համակարգված ազգային մարմիններին մինչև տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք պատասխանատու են արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման համար:

Արդյունք 3. Օժանդակություն գյուղական համայնքներում ընտրված ԿՌՄ միջոցառումների իրականանացմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց կողմից գլխավորած ֆերմերային տնտեսությունների աջակցությանը:

Միջոցառում 3.1. Կազմակերպել նպատակային քննարկումներ՝ դիմակայման մեխանիզմների ու գյուղատնտեսական աշխատանքների դիվերսիֆիկացման խնդիրների (հայտարարման) ախտորոշման և իրագործելի հնարավորությունների որոշման նպատակով՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց կողմից գլխավորած տնային/ֆերմերային տնտեսություններին:

Կլիմայի և գյուղատնտեսական համայնքների միջև բացը լրացնելու ամենակարևոր բաղադրիչը ֆերմերներին կլիմայի վերաբերյալ օգտակար տեղեկություններ և խորհրդատվություն տրամադրելն է: Համայնքի խոցելիության նախնական գնահատման համար կօգտագործվեն ՄԱԶԾ/ՓԴԾ խոցելիության գնահատման գործիքները՝ տարբեր տարիքային և գենդերային խմբերի կողմից ռիսկերի ընկալումը որոշելու նպատակով: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում տնային/գյուղական տնտեսությունների մի մեծ մասը կանայք են գլխավորում և, որ ավելի լավ եկամուտի նպատակով տղամարդկանց արտագնա աշխատանքի մեկնելու պատճառով այդ քանակն ավելացման միտում ունի, այս միջոցառումը առավել ուշադրություն կդարձնի կանանց կողմից գլխավորած տնտեսությունների համար դիմակայման իրագործելի ռազմավարությունների և գյուղատնտեսության դիվերսիֆիկացման ուղիների բացահայտման տարբեր հեռանկարների վրա: Այդ միջոցառման շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարության, տեղական փորձագետների և ֆերմերների հետ հարմարվողականության և մեղմման տարբերակների բացահայտմանը նվիրված շահակիցների խորհրդակցություններ կանցկացվեն: Հայտնի է, որ տարբեր համայնքներում ֆերմերներն ունեն կլիմայական ծայրահեղ երևույթներին, ինչպիսիք են՝ երաշտը, ջրհեղեղները և այլն, դիմակայելու իրենց ռազմավարությունն ու մոտեցումները: Այսպիսով, կա հարմարվողականության և մեղմման որոշակի գործելակերպ, որը հնարավոր է փոփոխվել և կիրառել այլ ֆերմերային համայնքներում՝ նրանց հուսալիությունը բազմակողմանիորեն գնահատելուց հետո:

Ռոռզումը կլիմայի փոփոխության և վտանգավոր երևույթների նկատմամբ դիմակայությունը բարելավման ամենակարևոր ոլորտն է: Հատուկ խորհրդակցություններ են ծավալվելու ռոռզման առկա համակարգերի բարելավման, կաթիլային և ցնցուղային ռոռզման ներդրումների միջոցով ջրօգտագործման արդյունավետությունը կատարելագործելու և այլ հարցերի քննարկման նպատակով:

Միջոցառում 3.2.Որոշել և իրականացնել փորձնական ծրագրեր, որոնք ուղղված են կանանց գլխավորությամբ տնային տնտեսություններին և, որոնք կարող են մեղմել կլիմայական ռիսկերը և գյուղատնտեսական արտադրանքի վրա դրանց հետևանքները:

Աղետների և կլիմայական ռիսկերի արդյունավետ և հաշվետու կառավարման համակարգ ստեղծելու համար անհրաժեշտ է ամրապնդել համայնքային մոտեցումը՝ աղետների և կլիմայական ռիսկերի գնահատման փաստացի համակարգ ստեղծելու նպատակով: Խոցելիության և կարողությունների բացերը ուսումնասիրելուց հետո իրականացվելու է համայնքային ռիսկի գնահատման փորձնական միջոցառում: Տնային տնտեսությունների և համայնքի մակարդակներում աղետների ռիսկերի վերլուծությունը կարելի է համատեղել մեկ համապարփակ գնահատման մեջ: Նմանապես, կարելի է համատեղել նաև աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի այն գնահատումները, որոնց ծավալը, մոտեցումը և նպատակները համընկնում են:

Ծրագիրը որոշելու և կառավարելու է կլիմայի փոփոխության ռիսկերից առաջացող հետևանքների մեղմման առնվազն մեկ փորձնական նախագիծ: Այդ նախագիծը կենտրոնանալու է համայնքային խոցելիության գնահատման միջոցով որոշված առավել խոցելի գյուղացիական տնտեսությունների վրա և նախասիրությանը տրվելու է կանանց կողմից գլխավորած տնային տնտեսություններին: Ծրագիրը նաև վերապատրաստման անհրաժեշտ դասընթացներ կկազմակերպի, համապատասխան խորհրդատվություն կմատուցի և առաջարկություններ կանի կլիմային առնչվող տեղեկատվությունը ֆերմերների կողմից ըմբռնման և դրանց կիրառման կարողությունների բարձրացման նպատակով: Առկա գիտաստիճան ծրագրերի կարողությունները, այդ թվում՝ լավագույն կառավարման փորձի առկայության մասին ավելի լավ տեղեկատվության հասանելիությունը, բարելավվելու են ագրոնոմիական պրակտիկայում՝ ֆերմերային մակարդակով:

Գործվեն փորձնական գնահատման արդյունքները և կներկայացվեն տեղական ինքնակառավարման մարմիններին՝ համայնքային ռիսկի գնահատման զանազան նախաձեռնությունների և նորարարությունների նպատակով դրանք օրինականացնելու համար:

Միջոցառում 3.3. Կլիմայի փոփոխության հետևանքների մեղմման կարողությունները բարելավելու նպատակով իրականացնել մասնագիտացված դասընթացներ և սեմինարներ ֆերմերների համար՝ առավել ուշադրություն դարձնելով կանանց կողմից գլխավորած ֆերմերային տնտեսություններին:

Կլիմայական ռիսկը նոր երևույթ չէ, և կլիմայական ռիսկի կառավարումը, դրա լայն իմաստով, վաղուց արդեն կիրառվում է: Կախված տարբեր հանգամանքներից, մարդիկ ունեն ռիսկի կառավարման տարբեր մեխանիզմներ: Այսպես, ֆերմերները սպասում են անձրևներին՝ օգտվելով տարբեր նշաններից և որոշում, եթե արդյոք պետք է ռոտզման համակարգեր կառուցեն, թե նվազեցնեն ռիսկայնությունը՝ հնարավորին չափ դիվերսիֆիկացնելով իրենց ապրուստի միջոցները: Գյուղատնտես-գիտնականները ստացել են երաշտի նկատմամբ կայուն սորտեր և մշակել են հողի կառավարման այնպիսի մեթոդներ, որոնցով բարձրացվում է հողի խոնավության պահպանման ունակությունը: Մյուս կողմից, եղանակային կանխատեսումները լուրջ առաջընթաց են ապրել և օգնում են մարդկանց համապատասխան պլանավորում իրականացել: Այդուհանդերձ, ներկա դիմակայման մեխանիզմներում դեռ մի բաց կա, որն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ փոփոխվող կլիմայի և եղանակային ծայրահեղ հարվածների մարտահրավերներից առաջ բոլոր այդ մեխանիզմները խափանվում են:

Կլիմայի փոփոխության ռիսկերին դիմակայելու համար գյուղատնտեսական զարգացման նպտակաուղղված և համապատասխան միջոցառումներ են անհրաժեշտ: Գյուղատնտեսության զարգացումը կարող է օժանդակել կլիմայական ռիսկերի կառավարմանը և հարմարվողականությանը հետևյալ կոնկրետ միջոցներով՝ ջրային ռեսուրսների կառավարում, բուսաբուծություն, տնտեսության դիվերսիֆիկացում, կանխատեսումների և այլ կլիմայական տեղեկատվություն հասանելիություն և այլն:

Գյուղատնտեսական գործունեության դիվերսիֆիկացման հնարավորություններից մեկը սերմերի սելեկցիան է և բարձր բերքատվության համար դրանց արդյունավետ մշակման նորարարական մեթոդներն են, քանի որ ֆերմերների կողմից մշակվող սածիլների և տնկանյութի մեծ մասը եղանակային փոփոխություններին չեն դիմանում: Ֆերմերների կողմից իրենց սեփական սերմնացուն արտադրելու և օգտագործելու նախապատվությունը կարևորում է այն փաստը, որ դրանք հաճախ

հարմարեցված չեն տվյալ տարածաշրջանի կոնկրետ կլիմայական և հողային պայմաններին: Նպատակային խմբերի քննարկումներն ու վերապատրաստման դասընթացները հնարավորություն կընձեռնեն պարզել ջերմա- և երաշտակայուն ու շուկայում պահանջված մշակաբույսերը, և դիմակայել ակնկալվող եղանակային պայմաններին: Գյուղատնտեսության արտադրողականության բարելավումն ու դիվերսիֆիկացումը, շուկայի մասին տեղեկատվության ավելի լավ հասանելիության ապահովումը, կլիմայի անորոշության նվազեցումը ուղղակիորեն կազդի ֆերմերների ապրուստի բարեկեցության վրա, քանի որ նրանք ավելի համարձակորեն կխուսափեն պահպանողական կառավարման ռազմավարությունները և ավելի վստահաբար կդիմեն ժամանակակից տեխնոլոգիաներին:

Նույնիսկ ագրոգիտասփյուռի ծառայության առկայության, դրա լավ ֆինանսավորման և տղամարդկանց ու կանանց համար վերջիններիս հասանելիության դեպքում, ֆերմերներից քչերն են օգտվում դրա դասընթացների և այլ կրթական հնարավորություններից: Մասնագիտացված դասընթացները կարող են բարելավել ագրոգիտասփյուռի ծառայությունների տեղեկատվական բացը, և ցուցադրական հողակտորներ կտրամադրեն, որոնք կարող են հանգեցնել հնարավոր ավելի լավ տեխնոլոգիաների կիրառմանը և ագրոգիտասփյուռի միջոցով տեղեկատվության ավելի ընդգրկումն հասանելիությանը:

Հաշվի առնելով այն, որ գենդերային հարցերը առանցքային նշանակություն ունեն գյուղատնտեսության ոլորտում, որտեղ առկա է ռեսուրսների վերահսկողության և հասանելիության գենդերային անհավասարության, սույն միջոցառումը հետամուտ է լինելու կանանց գլխավորած տնտեսությունների կարողությունների կառուցմանը, որն օգնելու է բացահայտել, գնահատել և իրականացնել ռիսկերի նվազեցման և հարմարվողականություն միջոցառումներ, և դիմակայել գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության հետևանքներին, և կիրառել կլիմայի մասին մասնագիտացված գործակալությունների կողմից տարածվող տեղեկատվությունը:

Միջոցառում 3.4: Տարածաշրջանի ոլորտային համայնք (ՏՈՀ) –ը խրախուսելու միջոցով աղետավտանգ համայնքներում մշակել և կառուցել լավ օրինակների և փորձի տարածման համար կազմակերպական ցանց՝ երկրի ԱՌՆ և ԿՓՀ գործիչների համար:

Աղետների ռիսկի վերլուծության և գնահատման գործընթացը, որոշ դեպքերում, համայնքի անդամների կողմից միայնակ դժվար է իրականացնել և կարող է պահանջել տարբեր արտաքին դերակատարների ներգրավվածություն եւ համագործակցություն: Մեկ ցանցում աշխատանքը խրախուսելու է ներգրավված գործընկերներին ավելին անել՝ հանուն համայնքների շահի: Հնարավոր կլինի լավ արդյունքների հասնել՝ աշխատելով համայնքային կազմակերպությունների, տեղական ՀԿ-ների և սպառողների այն խմբերի հետ, որոնք կարող են զբաղվել ԱՌՄ և ԿՌՆ խնդիրների մասին տեղակայվածության տարածմամբ և համապատասխան միջոցառումներ իրականացմամբ: Բացի այդ, իրազեկությունը բարձրացնելու նպատակով կարելի է ավելի լայնորեն օգտագործել կամավորական խմբերի հնարավորությունը:

Ելնելով տեղական կարիքներից, ծրագիրը աղետների ռիսկի կառավարման տեղեկատվական արտադրանքի ստեղծման նպատակով կստեղծի կամ ընդլայնի տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական ֆերմերների և այլ շահագրգիռ կողմերի միջև հաղորդակցման ցանցերը: Այն, նաև, խրախուսելու է Տարածաշրջանի ոլորտային համայնքին (ՏՈՀ)՝ կլիմայական ռիսկերի տարածաշրջանային կառավարմանն առնչվող խնդիրների լուծման միջոցով:

Մտեղծված ցանցը այդ ուսուցման գործընթացը համայնքի մյուս անդամների համար կվերածի իրազեկության բարձրացման մի գործընթացի՝ իրենց սեփական ռիսկերը նվազեցնելու և պատրաստվածությունը բարձրացնելու նպատակով: Մարդիկ ավելի ու ավելի տեղեկացված կլինեն իրենց կարողությունների շարունակաբար կատարելագործման և քաղած դասերը և ստացած գիտելիքները մյուս համայնքներում տարածելու անհրաժեշտության մասին:

VI. ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԻ և ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

Ակնկալվող ձեռքբերումը՝ ինչպես նշված է Հանրապետական ծրագրի արդյունքների և ռեսուրսների շրջանակում Հայաստանը կարողանում է առավել արդյունավետ ձևով հաղթահարել շրջակա միջավայրի հիմնական, այդ թվում՝ կլիմայի փոփոխության և բնական պաշարների կառավարման մարտահրավերները:

Ձեռքբերման ցուցանիշները՝ ինչպես նշված են Հանրապետական ծրագրի արդյունքների և ռեսուրսների շրջանակում, ներառյալ՝ ելակետային և թիրախային ցուցանիշները:

- 1) **Ցուցանիշ.** Կլիմայի փոփոխության մեղմմանը և հարմարվողականությանն արձագանքող քաղաքականության փաստաթղթեր և գործիքների թվաքանակը: Բազային իրավիճակ. ՀՀ-ի ինստիտուցիոնալ և իրավական դաշտը բարելավման կարիք ունի: Թիրախ. Կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողությունների ծրագիրը մշակված և ընդունված է:
- 2) **Ցուցանիշ.** Խոշոր բնական աղետների վաղ ահազանգման համակարգը գործում է: Բազային իրավիճակ. Ազգային վաղ ահազանգման համակարգի և ստանդարտացված ռիսկի տեղեկատվական կառույցների բացակայություն: Թիրախ. Խոշոր բնական աղետների վաղ ահազանգման համակարգը հզորացված:

Ձեռքբերման կիրառման ոլորտը. Կլիմայի փոփոխության և աղետների ռիսկերի կառավարման կարողությունների հզորացում:

Գործընկերական ռազմավարություն. Արտակարգ իրավիճակների նախարարություն (ԱԻՆ), Տարածքային կառավարման նախարարություն (ՏԿՆ), Բնապահպանության նախարարություն, Գյուղատնտեսության նախարարություն, (ԳՆ), ԱՌՆ Ազգային պլատֆորմ (ԱՌՆԱՊ), Համայնքային կազմակերպություններ և ՀԿ –ներ:

Ծրագրի անվանումը և ՆՀ (հասկացման ՆՀ-ը ATLAS համակարգում). Տեղական զարգացման բարելավված պլանավորման միջոցով կլիմայի փոփոխության ռիսկերի մեղմումը գյուղական համայնքներում Ծրագրի ՆՀ 00075559, Արդյունքի ՆՀ 00087401

| ԱԿՆԿԱԿՎՈՂ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԸ | ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԻ ԹԻՐԱԽՆԵՐԸ (ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ) | ՆԱԽԱՆԵՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊՍԱՄԽԱՆԱՍՈՒՆԵՐԸ | ՀԱՏԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՄՆ դոլար |
|--|--|--|--|---------------------------------|
| <p>Արդյունք 1. Կլիմայական ռիսկի կառավարման ավելի սերտ ինտեգրումը ԱՌՆ ազգային ռազմավարությանն աջակցվում և խրախուսվում է գյուղական զարգացման պլանավորման միջոցով:</p> | <p>2013 թ. թիրախը</p> <p>1. Ուսումնասիրել գրականություն և որոշել կլիմայական ռիսկերի կառավարման համաշխարհային լավագույն փորձը</p> <p>2. Խորհրդակցություններ և ժողովներ անցկացնել պետական</p> | <p>Միջոցառում 1.1. Ուսումնասիրել ներկայիս կլիմայի փոփոխականությանն առնչվող ռիսկերը՝ ԿՌՄ ռազմավարությունների մշակման միջոցով; կարճաժամկետից՝ երկարաժամկետ հեռանկարում օգտվել կլիմայի փոփոխականության և կլիմայի փոփոխության առաջացրած ռիսկերի և հետևանք-</p> | <p>ԱԻՆ, ԲՆ, ԱՌՆ ԱՌՆԱՊ, ՏԿՆ, ՀԿ-ներ</p> | <p>103.500</p> |

| | | | | |
|---|--|---|------------|---------------|
| <p><i>Ելակետ:</i> ԿՌՄ սահմանափակ ինտեգրումը առկա ԱՌՆ քաղաքականություններին և պլաններին; թույլ ինստիտուցիոնալ մեխանիզմներ՝ նախնական պլանավորման համար և կլիմայի ընթացիկ փոփոխականության նկատմամբ՝ համայնքների դիմակայությունը ապահովելու համար:</p> <p><i>Ցուցանիշներ.</i> Ճանաչվել է ԿՌՄ-ի կարևորությունը և այն ընդգրկվել է ԱՌՆ ռազմավարության մեջ, մշակվել է ԿՌՄ պլանավորման ուղեցույց և այն կիրառվել է 40 խոցելի համայնքներում:</p> | <p>գործընկերների և համայնքի ներկայացուցիչների հետ:</p> <p>3. Մշակել հարմարեցված ուսումնական նյութեր և մասնագիտացված դասընթացներ:</p> <p><u>2014 թ. թիրախը</u></p> <p>1. Նախապատրաստել ԿՌՄ պլանավորման ուղեցույց:</p> <p>2. Անցկացնել վերապատ-րաստման դասընթացներ և սեմինարներ ֆերմերների (պահպանելով գենդերային հավասարակշռությունը) և այլ շահագրգիռ անձանց համար՝ առնվազն 40 խոցելի համայնքներում:</p> <p>3. Իրականացնել հետադարձ կապի գնահատում և մոնիթորինգ:</p> <p><u>2015 թ. թիրախը</u></p> <p>1. Մշակել առաջարկություններ ԿՌՆ ինտեգրման վերաբերյալ :</p> <p>2. Կլիմայի փոփոխությունը ընդգրկել տեղական զարգացման քաղաքականության և պլանավորման մեջ:</p> <p>3. Հրատարակել և տարածել խոցելի համայնքներում ԿՌՄ պլանավորման նորացված ուղեցույց:</p> | <p>ների դիմակայման փորձից:</p> <p>Միջոցառում 1.2. Ծավալել խորհրդակցություններ կլիմայական ռիսկերի ընկալման վերաբերյալ տարբեր համայնքներում, շահառուների լայն խմբի հետ, մշակել ուղեցույցներ և իրականացնել կլիմայական ռիսկի կառավարման պլանների մշակումն ու ինտեգրումը հեշտացնելուն ուղղված մասնագիտացված դասընթացներ:</p> <p>Միջոցառում 1.3. Բարելավել խոցելի համայնքների ռիսկերի նվազեցման և հարմարվողականության կարողությունները՝ կլիմայից առաջացող ռիսկերը և հետևանքները հասկանալու, դրանց նախապատրաստվելու և պլանավորելու համար:</p> <p>Միջոցառում 1.4. Մշակել ԿՌՄ հարցերը ազգային ԱՌՆ ռազմավարությանը և տարածական զարգացման պլանավորմանը ինտեգրելու առաջարկություններ:</p> | | |
| <p>Արդյունք 2. Ազգային հաստատությունների</p> | <p><u>2013թ. թիրախը</u></p> | <p>Միջոցառում 2.1. Ուղենիշներ տրամադրել՝ կլիմայի փոփոխության</p> | <p>ԱՌՆ</p> | <p>83.500</p> |

| | | | | |
|---|--|---|--------------------------------------|--|
| <p>կարողությունների հզորացումն ազգային և համայնքային մակարդակներում՝ կլիմայական ռիսկի ապացույցների վրա հիմնված կառավարման նպատակով:</p> <p><i>Ելակետ:</i> Տվյալների մշակման, վերլուծության և փոխանակման ազգային գործակալությունների սահմանափակ կարողությունները: Վերլուծության և նախագուշակման նյութի պատրաստման սահմանափակ կարողություններ, ահազանգերի պատշաճ ձևով հաղորդման պակաս:</p> <p><i>Ցուցանիշներ:</i> Կլիմայական ռիսկի կանոնավոր գնահատման զարգացած համակարգ:</p> <p>Հայաստանի համար կլիմայական ռիսկերի կիրառելի քարտեզներ են մշակվել և ստեղծվել են դրանց պարբերական, գերադասելի է՝ ամենամյա, թարմացման մեխանիզմներ: Որոշվել և մեկ աղետավտանգ համայնքում իրականացվել է վաղ ահազանգման համակարգի փորձնական աշխատանք և ստեղծվել է նախագուշակման</p> | <ol style="list-style-type: none"> 1. Աջակցել կլիմայի փոփոխության հիմնական ռիսկերի բացահայտմանը: 2. Աջակցել գործակալություններին օդերևութաբանական տվյալների հավաքագրման և վերլուծության համար: 3. Հայաստանի համայնքների համար ընտրել կիրառելի վաղ ահազանգման համակարգի համաշխարհային լավագույն փորձը: <p><u>2014թ. թիրախը</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Կլիմայավտանգ համայնքներում վաղ ահազանգման համագորգերի վերաբերյալ վերապատաստման-ուսումնական աշխատանքներ իրականացնել: 2. Բարձրացնել իրազեկվածությունը և վերապատրաստել կամավորներին: 3. Աղետավտանգ համայնքներից մեկում փորձարկել վաղ ահազանգման համակարգ 4. Իրականացնել արդյունքների մոնիթորինգ և գնահատում: <p><u>2015թ. թիրախը</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Ամբողջ երկրի մասշտաբով | <p>հիմնական ռիսկերը բացահայտելու և դասակարգելու, գյուղական համայնքներում գյուղատնտեսության և էկոհամակարգերի վրա դրանց սոցիալ-տնտեսական հետևանքների ազդեցությունը գնահատելու համար: .</p> <p>Միջոցառում 2.2. Աջակցել Հիդրոմետ ծառայությանը և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը կատարելագործելու տվյալների հավաքագրման և վերլուծության գործընթացները՝ օդերևութաբանական վտանգների, ինչպիսիք են՝ երաշտը, ջրհեղեղը և այլն կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսման համար, դրանով նպաստելով գյուղական վայրերում կլիմայի նկատմամբ դիմակայության զարգացմանը:</p> <p>Միջոցառում 2.3. Մշակել երկրի և ընտրված համայնքների մասշտաբին համապատասխան կլիմայի և աղետների ռիսկի քարտեզներ՝ վնասների մասին պատմական տվյալների, հիդրոմետ տվյալների և կլիմայական ռիսկի կանխատեսումների հիման վրա, աջակցել քարտեզների ամենամյա թարմացման և փոփոխությունների մեխանիզմի ստեղծմանը:</p> <p>Միջոցառում 2.4. Ստեղծել Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի ուսանողներից բաղկացած մի</p> | <p>Հիդրոմետ ծառայություն, ԲՆ</p> | |
|---|--|---|--------------------------------------|--|

| | | | | |
|--|---|---|---|----------------|
| <p>տեղեկատվության տարածման մի մեխանիզմ:</p> | <p>մշակել կլիմայի և աղետների ռիսկերի քարտեզներ:</p> <p>2. Աջակցել քարտեզների ամենամյա թարմացման մեխանիզմի ստեղծմանը:</p> <p>3. Տարածել վաղ ահազանգման համակարգի փորձարկման տվյալները:</p> <p>4. Ստեղծել նախազգուշական տեղեկատվության տարածման մեխանիզմ:</p> | <p>կամավորական խումբ՝ գյուղական համայնքներում կանանց, տղամարդկանց և տարբեր տարիքային խմբերի առաջ ծառայած կլիմային և աղետներին առնչվող խնդիրների վերլուծության և ուսումնասիրության համար:</p> <p>Միջոցառում 2.5. Նպաստել լավագույն համաշխարհային փորձի ուսումնասիրությանը և Հայաստանի վաղ ահազանգման համակարգում դրա իրականացմանը: Ընտրված վաղ ահազանգման համակարգը փորձարկել մեկ աղետավտանգ / կլիմայագայուն շրջանում (մարզում):</p> <p>Միջոցառում 2.6. Հիդրոմետի կատարելագործված կարողությունների և տարածաշրջանային ագրոգիտասփյուռի կողմից գյուղական շահառուների համար հարմարեցված տեղեկատվության մատուցման ծառայությունների միջոցով՝ ամրապնդել վաղ ահազանգման համակարգերը:</p> | | |
| <p>Արդյունք 3. Օժանդակություն գյուղական համայնքներում ընտրված ԿՌՄ միջոցառումների իրականացմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց կողմից գլխավորած ֆերմերային տնտեսությունների աջակցությանը:</p> | <p>2013թ. թիրախը</p> <p>1. Շահակիցների և համայնքի ներկայացուցիչների հետ խորհրդակցություններ և ժողովներ անցկացնել:</p> <p>2. Աջակցել կլիմայի նկատմամբ գյուղական համայնքներում ամենախոցելիների բացահայտմանը:</p> | <p>Միջոցառում 3.1. Կազմակերպել նպատակային քննարկումներ՝ դիմակայման մեխանիզմների ու գյուղատնտեսական աշխատանքների դիվերսիֆիկացման խնդիրների (հայտարարման) ախտորոշման և իրագործելի հնարավորությունների որոշման նպատակով՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց</p> | <p>ԱԻՆ, ՏԿՆ, ՏԻՄ –եր, ԳՆ, Ազգային գործակալություններ, տարածաշրջանային խորհրդատուներ, ՀԿ-ներ</p> | <p>276.000</p> |

| | | | | |
|---|---|--|--|--|
| <p><i>Ելակետ:</i> Կլիմայի փոփոխության ռիսկերի նկատմամբ ամենախոցելիների վերաբերյալ սահմանափակ գիտելիքներ:</p> <p>Խոցելի գյուղական համայնքների կողմից կիրառվող դիմակայման և հարմարվողականության մեխանիզմների համապատասխանության վերաբերյալ սահմանափակ գիտելիքներ:</p> <p><i>Ցուցանիշներ:</i> Ազգային քաղաքականության համար ստեղծվել է համայնքային մակարդակով աղետների նկատմամբ ամենախոցելի (տղամարդիկ, կանայք, տարբեր տարիքային և սոցիալական խմբեր) անդամների մի պրոֆիլային ցանկ:</p> <p>Ամենախոցելի գյուղական համայնքների համարում աղետների առաջացրած վնասների և կորուստների նվազեցման լավագույն փորձը և դիմակայման ու հարմարվողականության փորձարկված մեխանիզմները փաստաթղթագրվել, փոխանակվել և ընդօրինակվել են:</p> | <p>3. Աջակցել աղետների և կլիմայի փոփոխության դիմակայման և հարմարվողականության համապատասխան ռազմավարությունների բացահայտմանը և պարզել, թե որն է կլիմայի փոփոխությանն ուղղված գյուղատնտեսական ավանդական պրակտիկան:</p> <p><u>2014թ. թիրախը</u></p> <p>1. Իրականացնել մասնագիտացված դասընթացներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց գլխավորած ֆերմերային տնտեսություններին:</p> <p>2. Կլիմայից տուժած համայնքներում կլիմայի և աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների համար տեխնիկական և ֆինանսական փորձնական օժանդակություն տրամադրել:</p> <p><u>2015թ. թիրախը</u></p> <p>1. Ստեղծել բազմաշահակից գործընկերություն</p> <p>2. Քաղած դասերի և լավագույն փորձի հրապարակում:</p> | <p>կողմից գլխավորած տնային / ֆերմերային տնտեսություններին:</p> <p>Միջոցառում 3.2. Որոշել և իրականացնել փորձնական ծրագրեր, որոնք նպատակաուղղված են համայնքների/ֆերմաների խոցելիության գնահատման արդյունքով որոշված՝ ամենախոցելիներին, որոնց միջոցով կարելի է մեղմել կլիմայական ռիսկերը և գյուղատնտեսական արտադրանքի վրա դրանց հետևանքները:</p> <p>Միջոցառում 3.3. Կլիմայի փոփոխության հետևանքների մեղմման կարողությունները բարելավելու նպատակով ֆերմերների համար մասնագիտացված դասընթացներ և սեմինարներ իրականացնել՝ առավել ուշադրություն դարձնելով կանանց կողմից գլխավորած ֆերմերային տնտեսությունների վրա:</p> <p>Համայնքի վրա հիմնված գնահատումն ու կլիմայի փոփոխության հարմարվողականության մեխանիզմների փորձարկման ազդեցության հաշվարկումը:</p> <p>Միջոցառում 3.4 Տարածաշրջանի ոլորտային համայնքը (ՏՈՀ) խրախուսելու միջոցով, աղետավտանգ համայնքներում լավ օրինակների և փորձի տարածման համար կազմակերպական մի ցանց մշակել և կառուցել երկրի ԱՌՆ և ԿՓՀ գործիչների համար:</p> | | |
|---|---|--|--|--|

| | | |
|-------------|-------------------|---------|
| Արդյունք 4: | Ծրագրի կառավարում | 37.000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 500.000 |

VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Իրականացման կառուցվածքը

Ծրագիրը հետևելու է ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակի կողմից ղեկավարվող իրականացման ուղղակի (ԻՈւ) մեխանիզմին, որը գլոբալ Ծրագրի և ազգային մակարդակի բաղադրիչների տարածաշրջանային տարն է հանդիսանալու: ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակը համաշխարհային Ծրագրի նպատակներին համահունչ ծրագրային առաջարկ է մշակել և ներկայացրել ՃԿՎԲ հանձնաժողովի հաստատմանը: Հայաստանի գրասենյակը պատասխանատու է ծրագրի արդյունքների համար և Աղետների կրճատման մասով տարածաշրջանային խորհրդատուի և Երկրի աջակցության կառավարման թիմի միջոցով իրականացման առաջընթացի թարմացված տվյալները ներկայացնելու է Աղետների ռիսկի նվազեցման տարածաշրջանային թիմին / ՃԿՎԲ:

Ֆինանսական հաշվետվողականության ապահովման նպատակով ծրագրի ուղղակի իրականացման ձևաչափն ընդգրկելու է ծախսերի նկատմամբ վերահսկողությունը և ծրագրի համար տրամադրված միջոցների համապատասխան ֆինանսական կառավարման ապահովումը, բոլոր անհրաժեշտ ֆինանսական հաշվարկների, գործարքների, լիազորության և վճարման պահանջագրերի իրականացումը:

Ծրագրի իրականացումն ամբողջությամբ համապատասխանելու է ՄԱԿ-ի համագործակցության ծրագրի գործողությունների պլանին (ՀԾԳՊ), որը կազմվել է 2010-2015թթ. ժամանակահատվածի համար և կառավարության կողմից ստորագրվել է 2010թ. հունիսին: ՀԾԳՊ ավելի լայն զարգացման համագործակցության օրակարգի մի մասն է՝ ՄԱԿ-ի 2010-2015թթ. Զարգացման աջակցության ծրագրի (ՄԱԿ ԶԱԾ), որը մշակվել և կառավարության հետ փոխադարձ ստորագրվել է 2009թ. հուլիսի 24-ին: Փաստաթուղթը կազմված է 2008թ. ստորագրված երկրի Կայուն զարգացման ծրագրում (Աղքատության հաղթահարման ռազմավարական 2-րդ ծրագիր-ԱՀՌԾ) ներկայացված թիրախներին և ռազմավարություններին և ազգային այլ գերակայություններին համապատասխան:

ՄԱԶԾ-ը Հայաստանի կառավարության հետ ունի ծրագրերի կատարման յուրահատուկ ձևաչափ, որը փոխնախարարների մակարդակով Ազգային տնօրենների մի ինստիտուտ է: Սկսած 2005թ. վերջնական արդյունքի քննարկման հանձնաժողովները, որոնք բաղկացած են նշված պետական բարձրաստիճան պաշտոնյաներից և ՄԱԶԾ ավագ և միջին դասի ղեկավարությունից, համատեղ դիտարկում են իրականացման առաջընթացը դեպի ծրագրի նպատակները և պայմանավորվում են հաջորդ տարվա միջոցառումների վերաբերյալ:

ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակը այս ծրագրի իրականացումը համապատասխանեցնելու է ՀԾԳՊ-ին և Տարեկան աշխատանքային պլաններին, որոնք մշակվել և փոխադարձ ստորագրվել են ՄԱԶԾ-ի և ազգային տնօրենի կողմից:

Ծրագրի խորհուրդը կազմված կլինի ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի տեղակալից, ՄԱԶԾ բնապահպանական ծրագրերի ղեկավարից, Բնապահպանական ծրագրերի ազգային տնօրենից, պատասխանատու գործընկեր հանդիսացող Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից նշանակված համակարգողից: Ծրագրի խորհուրդը կառավարման փոխհամաձայնեցված որոշումներ է կայացնելու՝ նման անհրաժեշտության առաջացման դեպքում: Ծրագրի խորհուրդը կունենա նաև վերջնական որոշում կայացնելու լիազորություններ այսպիսի հարցերում, որոնք ենթակա են պաշտոնական քննարկմանը և հաստատմանը, այդ թվում՝ տարեկան աշխատանքային պլանները և բյուջեները: Ծրագրի Ազգային տնօրենի և Ծրագրի խորհրդի ակնկալվող պարտականությունները ներկայացված են Հավելված 1-ում:

ՄԱԶԾ բնապահպանական ծրագրերի ղեկավարը տեխնիկական աջակցություն կցուցաբերի և կղեկավարի Ծրագրի համակարգողին: Բացի այդ, ծրագրի կառավարիչը կգլխավորի ռիսկերի բացահայտման և գնահատման գործընթացը և կձևավորի ռիսկերի կառավարման հզորացման

միջոցառումները և կներգրավի ու կբանակցի գործընկեր դոնոր և միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

Ծրագրի ամենօրյա աշխատանքները իրականացվելու են ՄԱԶԾ Կլիմայի փոփոխության ծրագրի արդեն լավ հիմնադրված գրասենյակի կողմից, որը տեղակայված է Կառավարության թիվ 3 շենքում (գրասենյակային տարածքը, կապի միջոցները և այլ կոմունալ հարմարությունները կառավարության ներդրումային մասնաբաժինն է՝ բնեղեն տեսքով): Ծրագրի կառավարման ենթադրվող կառուցվածքի պատկերը տես Նկար 3-ում: Երկրում ՄԱԿ ԿՓՇԿ իրականացման գիտելիքներն ու փորձը և հանրապետության մասնագիտացված հաստատությունների ու օժանդակող կառույցների հետ լավ հաստատված հարաբերություններն իրենց նպաստը կբերեն այս ծրագրի սահուն մեկնարկին և իրականացմանը:

Ծրագրի շրջանակներում Առաջադրանքի ղեկավարի (ԱՂ) լրիվ դրույքով աշխատող տեխնիկական փորձագետ է վարձվելու, ով կառավարման և տեխնիկական բնույթի անհրաժեշտ աջակցություն է մատուցելու Կլիմայի փոփոխության ծրագրի համակարգողին: Առաջադրանքի ղեկավարն ամբողջությամբ պատասխանատու է ծրագրի ճիշտ իրականացման և ծրագրի բոլոր միջոցառումների համակարգման համար: Նրան իրավունք է վերապահվում համապատասխան պլանավորված գործունեություն իրականացնել՝ ըստ Ծրագրի խորհրդի կողմից հաստատված ՏԱՊ-ի: Ծրագրի իրականացման համար մրցութային հիմունքներով ստեղծվելու է ծրագրի թիմ: Ծրագրի թիմն աշխատելու է ԱՂ-ի ղեկավարության ներքո, ով պլանավորման, իրականացման որակի, իրականացվող միջոցառումների ժամկետների պահպանման և արդյունավետության, միջոցների պատշաճ օգտագործման վերաբերյալ հաշվետու կլինի Ծրագրի համակարգողին և ՄԱԶԾ-ին: Առաջադրանքի ղեկավարի հավաքագրումը կիրականացնի ՄԱԶԾ-ը՝ ըստ սահմանված ընթացակարգերի: Տեղական օժանդակ աշխատակազմը առաջադրանքի ղեկավարին աջակցելու է ծրագրի ընդհանուր կառավարման գործում, այդ թվում՝ նյութատեխնիկական ապահովման, քննարկման փաստաթղթերի և հաշվետվությունների նախագծերի տարածման, ծրագրի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացման, խորհրդատուների աշխատանքի համակարգման և մոնիթորինգի ու այլ անհրաժեշտ աջակցության նպատակով: Անհրաժեշտության դեպքում, տարբեր տեխնիկական խնդիրների համար հրավիրվելու են նաև լրացուցիչ կարճաժամկետ տեղական և միջազգային փորձագետներ:

Ծրագրի կառավարման թիմը պատասխանատու կլինի ֆինանսական և տեխնիկական հաշվետվությունների համար, այդ թվում՝ կատարողականի մասին հաշվետվությունները, մոնիթորինգը և գնահատումը, վերապատրաստման դասընթացների/աշխատաժողովների կազմակերպումը և այլ առաջադրանքներ:

Ծրագրի երեք բաղադրիչները համալրվելու են կես դրույքով աշխատող տեղական մասնագետների միասին սերտորեն աշխատող խմբերով:

ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակի աջակցությունը

ՄԱԶԾ և ազգային գործադիր գործընկերները պայմանավորվել են, որ ծրագրի միջոցառումներին աջակցելու համար ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակը մատուցելու է հետևյալ ծառայությունները՝

- (i) ծրագրի անձնակազմի ընտրության և/կամ հավաքագրման վերաբերյալ վարչական հարցերի լուծում,
- (ii) ապրանքների, աշխատանքի և ծառայությունների գնում,
- (iii) վերապատրաստման աշխատանքների, սեմինարների և աշխատաժողովների ընտրություն և իրականացման օժանդակություն,

- (iv) ֆինանսական մոնիթորինգ և հաշվետվություն,
- (v) ուղիղ վճարումների կատարում,
- (vi) ծրագրի իրականացման վերահսկողություն, մոնիթորինգ և ծրագրի գնահատման աջակցություն:


ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակի կողմից ապրանքների և ծառայությունների գնումները և ծրագրի անձնակազմի հավաքագրումը պետք է կատարվի ՄԱԶԾ կանոնակարգերի, կանոնների, քաղաքականության և ընթացակարգերի համապատասխան: Ծրագրի կյանքի ընթացքում գրասենյակի կողմից մատուցվելիք օժանդակ ծառայությունների պահանջարկի փոփոխության դեպքում ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակի օժանդակ ծառայությունների ցանկը կարող է վերանայվել՝ Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի և իրականացնող գործընկերոջ փոխադարձ համաձայնության առակայության դեպքում:

Հայաստանի կառավարության և ՄԱԶԾ միջև Հիմնական աջակցություն ստանդարտ համաձայնագրի (ՀԱՍՀ) և ՄԱԿ Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) համապատասխան դրույթները, որը կողմերի միջև ստորագրվել է 1995թ. մարտի 8 - ին, այդ թվում՝ պատասխանատվության և արտոնությունների և անձեռնմխելիության մասին դրույթները կիրառվում են սույն օժանդակ ծառայությունների մատուցման վրա:

ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակի կողմից ըստ այս փաստաթղթի օժանդակ ծառայությունների մատուցմանն առնչվող, կամ դրանից առաջացող բոլոր պահանջներն ու վեճերը լուծվում են Հիմնական աջակցություն ստանդարտ համաձայնագրի դրույթների համաձայն:

ՄԱԶԾ և ՀՀ կառավարության լոգոտիպերը հավասարազոր են և պատկերվում են բոլոր հաղորդակցման կամ այլ հանրային իրազեկման նյութերի վրա:

Նկար 3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



VIII. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՁԵՎԱԶԱՓԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի մեկնարկը.

Ծրագրի մեկնարկից հետո առաջին 2 ամիսների ընթացքում ծրագիրը Մեկնարկային սեմինար է կազմակերպվելու, որին մասնակցելու են ծրագրի կազմակերպման կառուցվածքում նշանակված դերերակատարները, ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակը և, անհրաժեշտության/նպատակահարմարության դեպքում՝ տեխնիկական քաղաքականության և ծրագրերի տարածաշրջանային խորհրդատուները, ինչպես նաև այլ շահառուներ: Մեկնարկային աշխատաժողովը կարևոր է ծրագրի արդյունքների սեփականատիրության զգացմունքի առաջացման և առաջին տարվա տարեկան աշխատանքային պլանը կազմելու համար:

Մեկնարկային աշխատաժողովը պետք է նվիրված լինի մի շարք առանցքային հարցերին, որոնցից են.

ա/ Աջակցել բոլոր գործընկերներին լիովին հասկանալ ծրագիրը և դառնալ դրա սեփականատերերը: Մանրամասնել դերերը, աջակցել ծրագրի թիմի նկատմամբ ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի և ՃԿՎԲ -ի տարածաշրջանային աշխատակազմի ծառայությունների և լրացուցիչ պարտականությունների կատարմանը: Քննարկել ծրագրի որոշումներ կայացնելու կառուցվածքում՝ դերերը, գործառույթները և պարտականությունները, այդ թվում՝ հաշվետվությունների և հաղորդակցման ուղիները և տարաձայնությունների լուծման մեխանիզմները: Անհրաժեշտության դեպքում ծրագրի աշխատակազմի տեխնիկական առաջադրանքը կրկին կքննարկվի:

բ/ Ծրագրի արդյունքների շրջանակների հիման վրա՝ վերջնական տեսքի բերել առաջին տարեկան աշխատանքային պլանը: Դիտարկել և համաձայնեցնել ցուցանիշները, նպատակները և դրանց ստուգման միջոցներ, և վերստուգել ենթադրություններն ու ռիսկերը
գ/ Մանրամասն ակնարկ ներկայացնել հաշվետվությունների, մոնիթորինգի և գնահատման (ՄնԳ) պահանջների վերավերյալ:

դ/ Քննարկել ֆինանսական հաշվետվությունների կարգը և պարտականությունները, և տարեկան աուդիտի պլանը:

ե/ Պլանավորել Ծրագրի խորհրդի նիստերը և կազմել դրանց ժամանակացույցը: Ծրագրի կազմակերպական կառույցների բոլոր դերերն ու պարտականությունները պետք է հստակեցվեն և ժողովները պլանավորվեն: Ծրագրի խորհրդի առաջին նիստը պետք է գումարվի Մեկնարկային սեմինարից հետո ընկած առաջին 12 ամիսների ընթացքում:

Մեկնարկային սեմինարի հաշվետվությունը առանցքային տեղեկատվական փաստաթուղթ է և այն պետք է կազմվի և բաժանվի մասնակիցներին՝ սեմինարի ընթացքում որոշված և ընդունված զանազան պայմանավորվածությունների և պլանների պաշտոնական ձևակերպման նպատակով:

Ծրագրի ավարտը

Վերջին երեք ամիսների ընթացքում ՃԿՎԲ-ի կողմից տեխնիկական գնահատում է իրականացվելու, որի նպատակն է դիտարկել ձեռքբերումները, քաղած դասերը և մշակել այս միջամտության հաջորդ փուլը: Ծրագրի թիմը նախապատրաստելու է Ծրագրի մի վերջնական հաշվետվություն: Այս համապարփակ հաշվետվությունը ամփոփելու է ձեռքբերված արդյունքները (նպատակները, ստացված վերջնական արդյունքները, ուղղակի արդյունքները), քաղված դասերը, ծառայած խնդիրները և այն ոլորտները, որտեղ սպասված արդյունքները կորոշվել են իրականացված չլինել: Այն նաև հանձնարարականներ կտա այն հետագա քայլերի

համար, որոնք կարող են անհրաժեշտ լինել ծրագրի արդյունքների կայունության ապահովման և ընդօրինակման համար:

Ուսուցում և գիտելիքների փոխանակում

Առկա տեղեկությունների փոխանակման ցանցերի և ֆորումների միջոցով ծրագրից ստացված արդյունքները տարածվելու են ծրագրի միջամտության ոլորտի ներսում և դրանից դուրս:

Ծրագիրը, համապատասխանության և անհրաժեշտության դեպքում, գտնելու և մասնակցելու է գիտական, քաղաքական և / կամ այլ ցանցերի, որոնք կարող են քաղած դասերի միջոցով օգուտ բերել ծրագրի իրականացմանը: Ծրագիրը բացահայտելու, վերլուծելու և փոխանակելու է քաղած դասերի այն արդյունքները, որոնք կարող են օգտակար լինել ապագա նմանօրինակ ծրագրերի նախագծման և իրականացման համար:

Ի վերջո, երկկողմանի տեղեկատվական մի հոսք կհաստատվի այս ծրագրի և նմանօրինակ նպատակներով այլ ծրագրերի միջև:

Ընդհանուր առմամբ, համաձայն ՄԱԿ - ի օգտատերերի ուղեցույցում նշված ծրագրավորման քաղաքականության և ընթացակարգերի, ծրագիրը կարող է վերահսկվել հետևյալի միջոցով.

Տարեկան ցիկլի ընթացքում

- Եռամսյակային կտրվածքով - որակի գնահատումը պետք է արձանագրի առաջընթացը՝ դեպի առանցքային արդյունքների կատարումը ըստ ստորև ներկայացված Որակի կառավարման աղյուսակում բերված որակի չափանիշների և մեթոդների:
- Ծրագրի կառավարչի կողմից Ատլաս համակարգում պետք է ակտիվացվի և թարմացվի խնդիրների ցանկ՝ փոփոխություններ կատարելու հայտերին կամ հնարավոր խնդիրներին հետևման և լուծում տալու աշխատանքը հեշտացնելու նպատակով:
- Ելնելով ներկայացված նախնական ռիսկերի վերլուծությունից (տես՝ Հավելված 1), Ատլաս համակարգում պետք է ակտիվացվի ռիսկերի ցանկ և թարմացվի ծրագրի իրականացման վրա հնարար ազդեցություն ունեցող արտաքին միջավայրի դիտարկման միջոցով:
- Ատլաս համակարգում գրանցված վերոհիշյալ տեղեկությունների հիման վրա՝ Ծրագրի կառավարչի կողմից Ծրագրի խորհրդին ներկայացվում է «Ծրագրի ապահովման» միջոցով Ծրագրի առաջընթացի մի հաշվետվություն (ՇԱՀ) է ներկայացվում՝ օգտագործելով Executive Snapshot -ում առկա ստանդարտ հաշվետվության ձևաչափը:
- Ակտիվացվելու և պարբերաբար թարմացվելու է Ծրագրից քաղած դասերի ցանկ՝ կազմակերպության շրջանակներում շարունակական ուսուցումն ու հարմարվողականությունն ապահովելու և, ծրագրի ավարտին, Քաղած դասերի հաշվետվության կազմումը հեշտացնելու համար:
- Ակտիվացվելու և թարմացվելու է Ատլաս համակարգում Մոնիթորինգի Ժամանակացույցի պլան՝ Կառավարման առանցքային գործողություններին ու իրադարձություններին հետևելու նպատակով է:

Տարեկան

- **Հաշվետու տարվա ղեկույց:** Հաշվետու տարվա ղեկույցը պատրաստվում է Ծրագրի կառավարչի կողմից և ներկայացվում է Ծրագրի խորհրդին ու Վերջնական արդյունքների գնահատման խորհրդին: Որպես նվազագույն պահանջ, Հաշվետվու տարվա ղեկույցը պետք է բաղկացած լինի Եռամսյակային հաշվետվությունների համար նախատեսված Ատլաս համակարգի ստանդարտ ձևաչափից, որն ընդգրկում է ամբողջ տարին՝ վորոհիշյալ ԵՀ-ն յուրաքանչյուր տարրի նորացված տեղեկություններով հաներձ, ինչպես նաև ստացված ամփոփ արդյունքներից, որոնք ձեռք են բերվել նախապես սահմանված տարեկան թիրախների կտրվածքով՝ ուղղակի արդյունքների մակարդակում:
- **Ծրագրի տարեկան հաշվետվություն:** Ելնելով վերոնշյալ ղեկույցից, տարվա չորրորդ եռամսյակի ընթացքում, կամ դրանից անմիջապես հետո կազմվում է ծրագրի տարեկան հաշվետվություն՝ ծրագրի կատարողականը պարզելու և հաջորդ տարվա տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ) գնահատելու համար: Այս հաշվետվությունը կազմվում է Ծրագրի խորհրդի ղեկավարությամբ և, անհրաժեշտության դեպքում, այս գոծին կարող են ներգրավվել նաև այլ շահագրգիռ կողմեր: Այն կենտրոնանում է ուղղակի արդյունքներին հասնելուն ուղղված ձեռքբերումների վրա և նշում է վերջնական արդյունքին հասնելու համար մնացած անելիքները:

Որպես այս գործունեության մի մաս, ծրագրի նպատակների իրականացումն ապահովելու համար ծրագիրը նաև որակի կառավարման մոնիտորինգ և գնահատում է իրականացնելու:

Ծրագրի միջոցառումների արդյունքների որակի կառավարում

| | | |
|---|--|---|
| <p>ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կլիմայական ռիսկի կառավարման ավելի սերտ ինտեգրումը ԱՌՆ ազգային ռազմավարությանը աջակցվում և խրախուսվում է գյուղական զարգացման պլանավորման միջոցով</p> | | |
| <p>Միջոցառման արդյունք 1 (Միջոցառման ՆՀ-ը Ատլաս համակարգում)</p> | <p>1.1. Ուսումնասիրել կլիմայի փոփոխականությանն առնչվող ներկայիս ռիսկերը՝ ԿՌՄ ռազմավարությունների մշակման միջոցով: Կարճաժամկետից՝ երկարաժամկետ հեռանկարում օգտվելով կլիմայի փոփոխականության և կլիմայի փոփոխության առաջացրած ռիսկերի և հետևանքների դիմակայման փորձից:</p> <p>1.2. Տարբեր համայնքներում շահառուների լայն խմբի հետ ծավալել կլիմայական ռիսկի ընկալման վերաբերյալ խորհրդակցություններ, մշակել ուղեցույցներ և իրականացնել կլիմայական ռիսկի կառավարման պլանների մշակումն ու ինտեգրումը հեշտացնելուն ուղղված մասնագիտացված դասընթացներ:</p> <p>1.3. Բարելավել խոցելի համայնքների ռիսկերի նվազեցման և հարմարվողականության կարողությունները՝ կլիմայից առաջացող ռիսկերը և հետևանքները հասկանալու, դրանց նախապատրաստվելու և պլանավորելու համար:</p> <p>1.4. Մշակել ԿՌՄ հարցերը ազգային ԱՌՆ ռազմավարությանը և տարածական զարգացման պլանավորմանն ինտեգրելու առաջարկություններ:</p> | <p>Սկիզբը՝ 2013թ. հոկտեմբեր</p> <p>Ավարտը՝ 2015թ. մայիս</p> |
| <p>Առաջարկել</p> | <p>Օժանդակել ԿՌՄ առկա ԱՌՆ քաղաքականության և պլանների մեջ ընդգրկելու գործին, ուժեղացնել ինտիտուցիոնալ մեխանիզմները՝ հեռանկարային պլանավորման և նեկայիս կլիմայի փոփոխականության նկատմամբ համայնքների դիմակայությունն ապահովելու նպատակով</p> | |
| <p>Նկարագրությունը</p> | <p><i>Միջոցառումներն ուղղված կլինեն կլիմայական ռիսկի կառավարման կարևորության ընկալումը խթանելուն և ազգային ու տարածաշրջանային մակարդակով աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության մեջ դրա ընդգրկմանը: Կմշակվի կլիմայական ռիսկի կառավարման պլանավորման ուղեցույց և այն կկիրառվի խոցելի համայնքներում՝ տարբեր շահագրգիռ կողմերի համար կազմակերպվող վերապատրաստման դասընթացների և սեմինարների միջոցով: Կլիմայական ռիսկի կառավարման հայեցակարգը տարածաշրջանային զարգացման պլանավորման մեջ ավելի կխրախուսվի՝ ռիսկերի նվազեցմանն օգնելու և կլիմայի նկատմամբ դիմակայությունը բարձրացնելու նպատակով: Այդ միջոցառումներն իրականացվելու են հանրապետական և տարածաշրջանների կառավարման մարմինների, ազգային և տեղական տեխնիկական խորհրդատուների և տեղական ՀԿ - ների համագործակցության և համակարգման միջոցով:</i></p> | |
| <p>Որակի չափանիշը</p> | <p>Որակի մեթոդը</p> | <p>Գնահատման ամիս/ամսաթիվը</p> |
| <p>Ճանաչվել է ԿՌՄ կարևորությունը և այն ընդգրկվել է ԱՌՆ ռազմավարության մեջ:</p> | <p>Պետական մարմինների և շահակիցների հետ ծավալված խորհրդակցությունների</p> | <p>Եռամսյակ 3-4, 2013թ.</p> |

| | | |
|--|---|--------------------|
| | գնահատման զեկույցներ: | |
| | ԿՌՄ ռիսկի մեղմումը ընդլրկվել է ԱՌՆ գործողությունների պլանի մեջ: | Եռամսյակ 1, 2015թ. |
| Մշակվել է ԿՌՄ պլանավորման ուղեցույց և այն կիրառվել է խոցելի համայնքներում: | 40 համայնքներում իրականացված ուսումնական ծրագրերի վերաբերյալ զեկույցներ և արձագանքներ: | Եռամսյակ 1, 2015թ. |
| ԿՌՄ պլանավորման համար մշակված ուղեցույց | Գյուղատնտեսության ոլորտում ԿՌՄ պլանավորման համար հրատարակված ուղեցույցներ կամ ձեռնարկներ: | Եռամսյակ 2, 2014թ. |

ԱՐԴՑՈՒՆՔ 2. Ազգային հաստատությունների կարողությունների հզորացումը ազգային և համայնքային մակարդակներում՝ կլիմայական ռիսկի ապացույցների վրա հիմնված կառավարման նպատակով:

| | | |
|--|--|---|
| <p>Միջոցառման արդյունք 2 (Միջոցառման ՆՀ-ը Ատլաս համակարգում)</p> | <p>2.1. Ուղենիշներ տրամադրել՝ կլիմայի փոփոխության հիմնական ռիսկերը բացահայտելու և դասակարգելու, գյուղական համայնքներում գյուղատնտեսության և էկոհամակարգերի վրա դրանց սոցիալ-տնտեսական հետևանքների ազդեցությունը գնահատելու համար:</p> <p>2.2. Աջակցել Հիդրոմետ ծառայությանը և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը կատարելագործելու տվյալների հավաքագրման և վերլուծության գործընթացները՝ օդերևութաբանական վտանգների, ինչպիսիք են՝ երաշտը, ջրհեղեղը և այլն, կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսման համար, դրանով նպաստելով գյուղական վայրերում կլիմայի նկատմամբ դիմակայության զարգացմանը:</p> <p>2.3. Մշակել երկրի և ընտրված համայնքների մասշտաբին համապատասխան կլիմայի և աղետների ռիսկի քարտեզներ՝ վնասների մասին պատմական տվյալների, հիդրոմետ տվյալների և կլիմայական ռիսկի կանխատեսումների հիման վրա, աջակցել քարտեզների ամենամյա թարմացման և փոփոխությունների մեխանիզմի ստեղծմանը:</p> <p>2.4. Ստեղծել Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի ուսանողներից բաղկացած մի կամավորական խումբ՝ գյուղական համայնքներում կանանց, տղամարդկանց և տարբեր տարիքային խմբերի առաջ ծառայած կլիմային և աղետներին առնչվող խնդիրների վերլուծության և ուսումնասիրության համար:</p> <p>2.5. Նպաստել լավագույն համաշխարհային փորձի ուսումնասիրությանը և Հայաստանի վաղ ահագանգման</p> | <p>Սկիզբը: 2013թ. հոկտեմբեր</p> <p>Ավարտը: 2015թ. մայիս</p> |
|--|--|---|

| | | |
|--|---|--------------------------------|
| | <p>համակարգում դրա իրականացմանը: Ընտրված վաղ ահազանգման համակարգը փորձարկել մեկ աղետավտանգ / կլիմայագգայուն շրջանում (մարզում):</p> <p>2.6. Ամրապնդել վաղ ահազանգման համակարգերը՝ Հիդրոմետի կատարելագործված կարողությունների և տարածաշրջանային ագրոգիտասփյուռի կողմից գյուղական շահառուների համար հարմարեցված տեղեկատվության մատուցման ծառայությունների միջոցով:</p> | |
| Նպատակը | <p>Ամրապնդել տվյալների մշակման, վերլուծության և փոխանակման ազգային գործակալությունների կարողությունները, օժանդակել վերլուծական և նախագուշակման նյութի պատրաստման կարողությունների զարգացմանը և մշակել ահազանգերի պատշաճ ձևով հաղորդման մեխանիզմներ:</p> | |
| Նկարագրությունը | <p><i>Սույն արդյունքի շրջանակներում իրականացվող միջոցառումներն ուղղված կլինեն կլիմայական ռիսկի կանոնավոր գնահատման համակարգի մշակմանը, պետական հիդրոմետ և այլ գործակալությունների կլիմայական տվյալների մոնիթորինգի, վերլուծության և կիրառման կարողությունների զարգացմանը, Հայաստանի համար կլիմայական ռիսկերի կիրառելի քարտեզների և դրանց պարբերական թարմացման մեխանիզմների մշակմանը: Ընդունելով կլիմայական ռիսկերի կառավարման հայեցակարգում վաղ ահազանգման համակարգերի կարևորությունը, այս միջոցառումը նաև վաղ ահազանգման ընտրված համակարգի փորձնական ցուցդրություն է ձեռնարկելու մեկ վտանգված համայնքում և մշակելու է նախագուշակման տեղեկատվության պատշաճ տարածման մեխանիզմ: Միջոցառումներն իրականացվելու են Հիդրոմետ ծառայության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ սերտ համագործակցությամբ և համակարգմամբ:</i></p> | |
| Որակի չափանիշը | Որակի մեթոդը | Գնահատման ամիս/ամսաթիվը |
| Կլիմայական ռիսկերի կանոնավոր գնահատման համար սահմանված մեթոդներ | Կլիմայական ռիսկերի գնահատման մասին զեկույց | Եռամսյակ 2, 2014թ. |
| Հայաստանի համար մշակված կլիմայական ռիսկերի կիրառելի քարտեզ | Հրատարակված կլիմայական ռիսկերի քարտեզ | Եռամսյակ 3, 2014թ. |
| Աղետավտանգ համայնքներից մեկում վաղ ահազանգման համակարգի փորձարկում | Կատարված փորձնական աշխատանքի հաշվետվություն | Եռամսյակ 1, 2015թ. |
| Նախագուշակման տեղեկատվության տարածման համար մեխանիզմ | Նախագուշակման տեղեկատվության փոխանակման վերաբերյալ հաստատված փաստաթղթեր և ձևաչափեր | Եռամսյակ 2, 2015թ. |

ԱՐԴՑՈՒՆՔ 3. Օժանդակություն գյուղական համայնքներում ընտրված ԿՌՄ միջոցառումների իրականացմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց կողմից գլխավորած ֆերմերային տնտեսությունների աջակցությանը

| | | |
|---|---|--|
| <p>Միջոցառման արդյունք 3. (Միջոցառման ՆՀ-ը Ատլաս համակարգում)</p> | <p>3.1. Կազմակերպել նպատակային քննարկումներ՝ դիմակայման մեխանիզմների ու գյուղատնտեսական աշխատանքների դիվերսիֆիկացման խնդիրների (հայտարարման) ախտորոշման և իրագործելի հնարավորությունների որոշման նպատակով՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց կողմից գլխավորած տնային/ֆերմերային տնտեսություններին:</p> <p>3.2: Որոշել և իրականացնել փորձական ծրագրեր, որոնք ուղղված են կանանց գլխավորությամբ տնային տնտեսություններին և, որոնք կարող են մեղմել կլիմայական ռիսկերը և գյուղատնտեսական արտադրանքի վրա դրանց հետևանքները:</p> <p>3.3: Կլիմայի փոփոխության հետևանքների մեղմման կարողությունները բարելավելու նպատակով ֆերմերների համար մասնագիտացված դասընթացներ և սեմինարներ իրականացնել՝ առավել ուշադրություն դարձնելով կանանց կողմից գլխավորած ֆերմերային տնտեսությունների վրա:</p> <p>3.4: Տարածաշրջանի ոլորտային համայնքին (ՏՈՀ) խրախուսելու միջոցով, աղետավտանգ համայնքներում լավ օրինակների և փորձի տարածման համար կազմակերպչական ցանց մշակել և կառուցել երկրի ԱՌՆ և ԿՓՀ գործիչների համար:</p> | <p>Սկիզբը՝ 2013թ. հոկտեմբեր Ավարտը՝ 2015թ. մայիս</p> |
| <p>Առաջարկել</p> | <p>Ֆերմերներին կլիմայի փոփոխությանն առնչվող ռիսկին դիմակայելու մեխանիզմների մասին գիտելիքներ հաղորդել՝ հատուկ ուշադրություն դարձնելով գյուղական համայնքներում կանանց կողմից գլխավորած տնտեսությունների վրա:</p> | |
| <p>Նկարագրությունը</p> | <p><i>Միջոցառումներն ուղղված կլինեն դիմակայման մեխանիզմների ընտրությանն ու փորձարկմանը՝ ընտրված կլիմայավտանգ համայնքներում կորուստները նվազեցնելու և կլիմայի փոփոխությունների մեղմման մասով ֆերմերների կարողությունների կատարելագործման նպատակով: Միջոցառումների շարքում կլինեն՝ կլիմայի փոփոխության ազդեցության մեղմմանն ուղղված փորձական աշխատանքներ և մասնագիտացված դասընթացներ: Միջոցառումներն իրականացվելու են տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական ՀԿ-ների, փորձագետների և ներկա համայնքային ցանցի հետ սերտ համագործակցությամբ և համակարգմամբ:</i></p> | |
| <p>Որակի չափանիշը</p> | <p>Որակի մեթոդը</p> | <p>Գնահատման ամիս/ամսաթիվը</p> |
| <p>Վերապատրաստման մասնագիտացված դասընթացներ</p> | <p>Վերապատրաստման ծրագրերի հաշվետվություններ և նյութեր, ֆերմերներից և շահակիցներից ստացված գնահատականներ և արձագանք</p> | <p>Եռամսյակ 1-4, 2014թ.</p> |

| | | |
|---|--|--------------------|
| Վտանգված համայնքներում կլիմայի փոփոխությունների հետևանքների մեղմման աշխատանքների փորձարկում | Կատարված փորձնական աշխատանքի զեկույց | Եռամսյակ 2, 2015թ. |
| Տարածաշրջանի ոլորտային համայնքին (ՏՈՀ) խրախուսման միջոցով ստեղծված կազմակերպական ցանց | Կլիմայական ռիսկի կառավարման մասին ՏՈՀ - ի զեկույցը | Եռամսյակ 4, 2014թ. |

IX. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ծրագրային այս Փաստաթուղթն այն գործիքն է, որը, որպես այդպիսին, սահմանված է Հայաստանի կառավարության և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) միջև Հիմնական աջակցություն ստանդարտ համաձայնագրի (ՀԱՍՀ SBAA) 1-ին Հոդվածում, որը կողմերը ստորագրել են 1995 թ. մարտի 8 -ին: Ընդունող երկրում իրականացնող կազմակերպություն ասելով, ըստ Հիմնական աջակցություն ստանդարտ համաձայնագրի, պետք է հասկանալ՝ կառավարության համագործակցող կազմակերպություն, ինչպես սահմանված է այդ Համաձայնագրում:

Հիմնական աջակցություն ստանդարտ համաձայնագրի Հոդված III – ի համաձայն, Կատարող մարմնի ու իր անձնակազմի և գույքի, ինչպես նաև վերջինիս տնօրինության տակ դրված ՄԱԶԾ – ի գույքի ապահովության ու անվտանգության պատասխանատվությունը դրվում է իրագործող գործակալության վրա:

Կատարող մարմինը պետք է

- (i) կազմի անվտանգության համապատասխան մի պլան և իրականացնի այդ անվտանգության պլանը՝ հաշվի առնելով այն երկրի անվտանգության իրավիճակը, որտեղ իրականացվում է ծրագիրը,
- (ii) կրի Կատարող մարմնի անվտանգությանն առնչվող և անվտանգության պլանի իրականացման բոլոր ռիսկերն ու պարտավորությունները:

ՄԱԶԾ-ն իրավունք է վերապահում ստուգելու վորոհիշյալ պլանի առկայությունը և, անհրաժեշտության դեպքում, այդ պլանի մեջ փոփոխություններ մտցնելու առաջարկություններ անել: Սույնով նախատեսվող անվտանգության պլանի պատշաճ պահպանման և իրականացման ձախողումը այս համաձայնագրի խախտում է համարվում:

ՄԱԶԾ մշտական ներկայացուչիչը լիազորված է սույն Ծրագրային Փաստաթղթում գրավոր կարգով կատարել հետևյալ փոփոխություններ, այն դեպքում, եթե նա վավերացրել է ԳԷՖ գրասենյակի կողմից ստորագրված համաձայնագիրը և հավաստիացված է, որ սույն Ծրագրի Փաստաթղթի մյուս ստորագրող կողմերը չեն առարկում առաջորկվող փոփոխություններին՝

- ա) վերանայել Ծրագրի փաստաթղթի ցանկացած հավելվածը և դրանում ավելացումներ կատարել,
- բ) փոփոխություններ, որոնք չեն հանգեցնում ծրագրի ուղղակի նպատակների, արդյունքների կամ միջոցառումների փոփոխությանը, այլ առաջանում են արդեն համաձայնեցված արդյունքների վերադաստիարման կամ սղաճի հետևանքով ծախսերի աճի պատճառով,

գ) պարտադիր տարեկան փոփոխություններ, որոնք՝ սղաճի պատճառով կամ հաշվի առնելով կազմակերպության ծախսերի ճկունությունը, վերափոխում են ծրագրի համաձայնեցված գնումների գրաֆիկը կամ ավելացնում են փորձագետների կամ այլ ծախսեր՝ և
դ) լրացուցիչ հավելվածների և ներդիրների ավելացում միայն այն ձևով, ինչպես ներկայացված է սույն Ծրագրային փաստաթղթում:

X. ԱՌԻԴԻՏԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Առողիտն իրականացվում է ըստ ՄԱԶԾ Ֆինանսական կանոնակարգերի և կանոնների և ՄԱԶԾ ծրագրերի համար կիրառելի առողիտի քաղաքականությանը համապատասխան:

XI. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Ծրագրի խորհրդի և ազգային տնօրենի ակնկալվող պարտականությունները

Ընդհանուր պայմաններ

- 1.1. Ծրագրի խորհուրդը ձևավորվելու է ստորագրված ծրագրային փաստաթղթի հիման վրա՝ “Կլիմայի փոփոխության ռիսկերի մեղմումը գյուղական համայնքներում” անվանումով ծրագրի համար (այսուհետ՝ “Ծրագիր”):
- 1.2. Այս փաստաթուղթը սահմանում է ծրագրի խորհրդի հիմնական առաջադրանքները, կառուցվածքը, կազմակերպական գործընթացը և ժողովների ժամանակացույցը, ինչպես նաև ծրագրի խորհրդի գործառույթներն ու իրավունքները:
- 1.3. Այս փաստաթուղթը կիրառվում է ծրագրի խորհրդի բոլոր անդամների գործողությունների վրա:
- 1.4. Ծրագրի խորհուրդը մի խումբ է, որը կառավարման և վերահսկողական, համակարգման գործառույթներ է իրականացնում և քաղաքական աջակցություն է մատուցում ծրագրին:
- 1.5. Ծրագրի խորհրդի գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Մահմանադրության, Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերի, Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշումների և հրամանների, ինչպես նաև սույն փաստաթղթի հիման վրա:
- 1.6. Ծրագրի խորհրդի գործունեությունն իրականացվում է ազատ քննարկման և մտքերի բաց արտահայտման սկզբունքի հիման վրա:

2. Ծրագրի խորհրդի հիմնական առաջադրանքները

- 2.1. Ծրագրի գործունեության նկատմամբ վերահսկողությունն ու համակարգումը:
- 2.2. Ծրագրի աշխատակազմի և խորհրդատուների հետ տեղական ղեկավարության համագործակցային մասնակցության պայմանների ստեղծում՝ դրանով հնարավոր դարձնելով ծրագրի միջոցառումների հաջող իրականացումը:
- 2.3. Առաջարկությունների դիտարկում, գնահատում և մշակում, ինչպես նաև ռամավարության, բովանդակության, ծավալի և ծրագրի աշխատանքների կոնկրետ քայլերի ժամանակացույցի վերաբերյալ խորհրդատվական և մասնագիտական առաջարկությունների տրամադրում:
- 2.4. Օժանդկություն ծրագրի աշխատանքային պլանի իրականացմանը:
- 2.5. Ծրագրի խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է սույն փաստաթղթով:

3. Ծրագրի խորհրդի հիմնական գործառույթները

- 3.1. Իրականացնում է ծրագրի ընդհանուր ղեկավարությունը:
- 3.2. Սահմանում է ծրագրի բարձրագույն ուղղությունները:
- 3.3. Հեշտացնում է այլ օժանդակ ծրագրերի հետ փոխգործակցությունը:
- 3.4. Հեշտացնում է պետական գործակալությունների, կազմակերպությունների և այլ ինստիտուտների միջև փոխգործակցությունը՝ ծրագրի միջոցառումների հաջող իրականացումն ապահովելու նպատակով:
- 3.5. Ծրագրի ընթացքում զանազան պետական մարմիններում առկա բոլոր այն փաստաթղթերի և տվյալների լայն հասանելիություն է ապահովում, որոնք անհրաժեշտ են ծրագրի մոնիթորինգի և իրականացման համար:
- 3.6. Ծրագրի միջոցառումների իրականացման հարցերի վերաբերյալ ծրագրին մեթոդաբանական և գործնական աջակցություն է տրամադրում:
- 3.7. Քննարկում և հաստատում է Տարեկան աշխատանքային պլանները, վերանայված բյուջեները և փուլային ֆինանսավորումը:
- 3.8. Քննարկում և հաստատում է ծրագրի միջոցառումների տարեկան հաշվետվությունները:

- 3.9. Իրականացնում է հիմնական համակարգող մարմնի գործառույթներ՝ ծրագրի շահերի առաջխաղացման նպատակով՝ ՀՀ կառավարության կողմից քաղաքական, կորգավորման, իրավական և ֆինանսական օջանդակության առումով:
- 3.10. Գլոբալ բնապահպանական ծրագրի ֆինանսավորման ավարտից հետո շարունակում է լրացուցիչ համաֆինանսավորում ձեռք բերելու ջանքեր գործադրել՝ ծրագրի արդյունքներին և միջոցառումներին աջակցելու համար:
- 3.11. Քննարկում և հաստատում է ծրագրի Տեխնիկական խորհրդատվական կոմիտեի և ծրագրի այլ աշխատանքային խմբերի ստեղծման նպատակահարմարությունը:

4. Ծրագրի խորհրդի կազմը

- 4.1. Ծրագրի խորհուրդը կազմվում է հետևյալ կազմակերպությունների ներկայացուցիչներից.
 - ՄԱԶԾ բնապահպանական կառավարման ծրագրերի ազգային տնօրեն (ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ)
 - ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն (ազգային պատասխանատու գործընկեր),
 - ՄԱԶԾ (Հայաստանյան գրասենյակ):
- 4.2. Ծրագրի խորհրդի ընդհանուր կառավարումն իրականացնում է ՄԱԶԾ բնապահպանական ծրագրերի կողմից:
- 4.3. Կոնկրետ հարցերի լուծման համար ծրագրի խորհրդի ժողովներին կարող են հրավիրվել զանազան անձիք, այդ թվում՝ տեխնիկական մասնագիտացված ինստիտուտներից և ակադեմիաներից, ինչպես նաև նախագծային ընկերություններ, խորհրդատուներ, մասնագետներ և այլոք:

5. Ազգային տնօրենի դերն ու պարտականությունները

- 5.1. Ազգային տնօրենը (US) պատասխանատվություն է կրում Ծրագրի համակարգման համար՝ ՀՀ կառավարության առաջնահերթություններին համահունչ:

US տարաբնույթ օժանդակություն է մատուցում Ծրագրի հաջող կատարման և, ծրագրի ավարտից հետո, համապատասխան քայլերի, ներառյալ՝ Ծրագրի արդյունքների երկարակետության ապահովման, ինչպես նաև քաղաքացիական դասերի տարածման համար:

6. Ծրագրի խորհրդի գործունեության կազմակերպումը և ժողովների ժամանակացույցի կազմումը

- 6.1. Ծրագրի խորհուրդն իր աշխատանքն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն տարին մեկ անգամ, կամ, անհրաժեշտության դեպքում, ավելի հաճախ:
- 6.2. Ծրագրի խորհուրդն իր որոշումները կարող է կայացնել իր երեք անդամներից երկուսի ներկայության դեպքում:
- 6.3. Ծրագրի խորհուրդն իր որոշումները կայացնում է նիստերի ընթացքում՝ քվեարկության միջոցով: Նիստին մասնակցող Ծրագրի խորհրդի անդամները ջանալու են համաձայնության հասնել:
- 6.4. Ծրագրի խորհրդի նիստերի որոշումները ձևակերպվում են արձանագրություններով:
- 6.5. Ծրագրի խորհրդի նիստերին օժանդակելու համար ծրագրի աշխատակազմն իրականացնում է հետևյալ միջոցառումները.
 - Վերլուծում է կազմակերպությունների կողմից ներկայացված տեղեկությունները, օրակարգ է կազմում, անհրաժեշտ նյութեր է տրամադրում,
 - Նախագահի, կամ նրա կողմից նշանակված պատվիրակի նախնական քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում օրակարգի նախագիծը՝ կից փաստաթղթերով և բացատրական նամակով հանդերձ,
 - Նիստից առնվազն տաս օր առաջ հայտարարում է նիստի անցկացման ժամի և տեղի մասին և ծրագրի խորհրդի անդամներին բաժանում է հաստատված նյութերը:

Հավելված 2. Ռիկերը և մեղմման միջոցառումները

Առաջարկվող ծրագրի ռազմավարության հաջողության համար չափազանց կարևոր են հետևյալ ենթադրվող պայմանները՝ Հայաստանի կառավարության հետ սերտ համագործակցությունը, իրականացման ժամանակ բնական մեծ աղետների բացակայությունը, անձնակազմի առկայությանն ու նվիրվածությունը, ինչպես նաև տարածաշրջանի կայունությունը:

Ծրագրի զարգացման ռազմավարության հիմնական ռիսկերը և դրանց մեղմման համար առաջարկվող միջոցառումները ներկայացված են ստորև աղյուսակում:

| # | Նկարագրությունը | Ամիս/ամսաթիվ | Տեսակը | Աղդեցությունը և հավանականությունը (ասնդղակը – ամենացածրը՝ 1, ամենաբարձրը՝ 5) | Մեղմման ռազմավարություններ / ղեկավարության արձագանք | Մեփակա-նատերը | Ով է ներկայացրել, թարմացրել | Վերջին անգամ թարմացվել է | Կարգավիճակը |
|----|---|--------------|-------------------------|--|---|---------------|-----------------------------|--------------------------|-------------|
| 1. | ԿՌՄ չի ինտեգրվել ազգային մակարդակով ԱՌՆ ռազմավարությանը | | Քաղաքական, ռազմավարական | Կառավարությունը կարող է որոշել, որ ԿՌՄ հարցերի ընդգրկումը ԱՌՆ ազգային ռազմավարության մեջ առաջնահերթ խնդիր չէ I = 2 P = 1 | Պետական մարմինների հետ ավելի շատ քննարկել ԿՌՄ ինտեգրման անհրաժեշտությունն ապացուցելու համար | | | | |
| 2. | ԿՌՄ պլանավորումը համայնքներում չի կիրառվել | | Ինստիտուցիոնալ | Որոշ համայնքներում ժողովուրդն ու ՏԻՄ –երը կարող են չհամագործակցել | Ծրագրի թիմը կփորձի կիրառել այլ շահագրգիռ և հետաքրքրված համայնքներից ստացած | | | | |

| | | | | | | | | | |
|----|--|-------------------------|--|---|---|--|--|--|--|
| | | | | և գտնել, որ ԿՌՄ միջոցառումների իրականացումը նպատակահարմար չէ I = 1 P = 2 | ապացույցների և լավագույն փորձի վրա հիմնված փաստարկներ | | | | |
| 3. | Մեղմման նպատակով ընտրված փորձական աշխատանքը սպասվածից ավելի միջոցներ է պահանջում | Ֆինանսական, գործառնական | Փորձական աշխատանքները, մասնավորապես վաղ ահազանգման համակարգերում, կարող են լայնածավալ լինել և դրանց իրականացումը կարող է սպասվածից ավելի միջոցներ պահանջել I = 3 P = 2 | Լրացուցիչ միջոցների ապահովման նպատակով տեղեկություններ փոխանակել և համագործակցել այլ դոնոր կազմակերպությունների հետ | | | | | |